

Տ 773

(ՎԵՐԱԿՐՈՆԻ ԱՐԵՎԱԿԵՐ)

ԵՐԿՈՒ ԹՈՒՄԲ

Ա. Ա. Ա.

ԽԵՂՋ ՍԵՐԱՀԱՐՆԵՐ

— ։ ։ ։ —

Ժերկու թումբի մէջ գեղ սէր ու ժլու,
Ժերկու վեպանի ուշը մեռը խլու...
Ժերկու թումբ»

=====

(Անցկած բան)

891.99

Խ - 84

ՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅԵՐՆ

Տիֆլուս,

Տիպ. «Կույտ» Վարոնակ № 14.

Հ 2-39492 2-39492 01 JAN 2009
ԵՐԿՈՒ ԹՈՒՄ Բ 19 NOV 2010

891.99
Ա-84

Կ Ա Մ

ԽԵՂՃ ՍԻՐԱՀԵՐՆԵՐ

«Երկու թումբի մէջ գեռ սէր ա մլըմ,
«Երկու ջիվանի ուշը-միտքը խլըմ...»
«Երկու թումբ»

(Ա Ն Ց Կ Ա Ց Ա Ծ Բ Ա Ն)

Աշխատասիրեց

ԱԳԻՔԸՆԴԳՐ ԱՐՅՈՒՑԵՐՆ

ԵՐՄՈՐԴ ՄԱԼԱԳՐՈՎ ԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ 21054

Տպարան «Կուլտուրա»

Տիպ. „Культура“ Баронская № 14.
1912

21.02.2013
2005 MAC FO

27665

ԱՐՄԵՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՎԱ


ԱՐՄԵՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս ան անը է Ար Արմենիա տպաք
աշխարհական պատմութեան ամենամեծ տպաք
աշխարհական տպաք

(ՀԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ ԱՅ)



39485-63



ԱՐՄԵՆԻԱ ՏԵՐ-ԳԵՏՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՐԵՍԵԱՑ

93-695 431133

Խոր հարազատ կողակից

Շ ՈՒՇԱՆԻԿԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄ է

ՆՈԽԱՑ

ԱՅԼՈՒՅՈՒՂԻ

ՄԵՄՈՒԼԻ ԿԱՐԺԻՔԲ:

«Երկու Թումբ» կամ «Խեղճ սիրահարներ»,
աշխատափոլթիւն Ա. Արարատեանցի, Բա-
զու, 1877:

Մեր առաջ դրած է մի գրքոյկ, որի հեղի-
նակը, օգուտ քաղելով ժողովրդական աւանդու-
թիւններից, մի ամբողջ զբոյց է հիւսել:

Խոստովանում ենք, որ մենք միշտ այն կար-
ծիքն ենք ունեցել, թէ ժողովրդական երգերը,
զրոյցները և ամեն տեսակ բերանացի աւանդու-
թիւնները հարկաւոր է ամենայն զգուշութեամբ
ժողովել և ասանց որևէ փոփոխութեան հրատա-
րակել, այնպէս, ինչպէս որ ինքը ժողովուրդը
երգում ու պատմում է:

Այդ այն օգուտն ունի, որ մենք կարող ենք
սեպհական աղբիւրներից և անընդմիջաբար տե-
ղեկանալ ժողովրդական կեանքի հանգամանքնե-
րին և լեզուի կարեւոր ձեերին: Վերջին օգուտը
մանաւանդ շօշափելի է, կարծեմ, շատերի համար
մեր նոր լեզուն, օտար ազդեցութիւնների շնոր-

հիմ, այնպիսի վտանգաւոր ճանապարհի վրայ է
ծանդնած, որ իւր զարգացմանը հասնելուց աշ-
ուած, կարող է բոլորովին իւր կենդանութիւնը
կորցնել և մի ցաւալի վախճան ունենալ, եթէ
շարունակ հեսու պահենք նրան իւր բնական աղ-
բիւրից և կենդանի բարբառներից անկախ մշա-
կենք: «Երկու Թումբ» կամ „Խեղճ Սիրահարնե-
րի“ հեղինակը ցոյց առւեց, թէ կարելի է աւան-
դութիւնից օգուտ քաղել մի սիրուն վէպիկ յօ-
րինելու համար, որ նորանով աւելի զրաւիչ է
մեզ համար՝ որ բնականութեան հետ ուսանպանել
է տեղական (Շամշուլգեցոց) կենդանի բառբառը:

Պ. Արարատեանը իւր զրքոյկը նշանակելով
պիւղական լնթերցանութեան համար՝ մի փոք-
րիկ յառաջարանի մէջ աշխատում է, նոյն դա-
սին մատչելի ձեռվ, հասկացնել գիրք կարգալու,
առ հասարակ ուսման օգուտները:

«Որ ինչ ա կարգացողն օգուտ ունենայ էս
զրքի կարգալուց, պէտք ա ծանր ու բարակ
կարգա, ամէն բան հասկանայ, ետոյ թուղթը
շուռ տա: Ռոպէն, զրուստ ա, թանգ ա ամեն բա-
նի մէջ, միայն էկ հայի համար—ոչինչ, որեմն
մեղք չէր ըլի թէ ասէինք, որ մի զրքի կարգա-
լու համար մի ամիս ա հարկաւոր: Ծովը միայն
գիրք կարգու չի սիրիլ, իսկ խելօք մարդը կար-
գալը զարլու փլաւից լաւ կը հաշվի: Հարլու փլ-
աւը միայն փորն ա կշապցնըմ, իսկ կարգալը
հոգու կերակուրն ա, Ամեն մարդ ով որ ուզըմա
հոգին զուարթ ըլի, պէտք ա կարդա, չունքի
խելն ու շաւը գրի մէջն ա: Զուր ա ալլըմ էն
մարդը—ասեց մի դիտուն—որ չի իմանըմ, թէ
իւր ժամանակը մինչ բան ա անց կենըմ թէ

իր ու թէ ընկերների մօտ առանց ուրիշի բանն իմանալու դու քեզ ու քեզ չես կարող գրստութիւն Խուլ կըլի էն մարդը, որ չի ուզիւ գիրք կարգար: Երբ որ գիրք չկարդանք, կնշանակի թէ մենք մեր օգուտը չենք ուզըմ: Ցաւըմ ա սիրտս, որ միայն հայերի մէջ հմ տեսնըմ էս պակասութիւնը: 'Ի հարկէ, սա մի էնհէնց ցաւ ա, որ մի օր կառողջանայ, թէ ուսումը մեր մէջ աճի: Պէտք ա սրա համար չարչարանք, Ամեն մարդ պէտք ա շխատի: Առաջ գէլացին ուսում տա իր որդուն: Եթէ ուսում չկա, ուրեմն կմնանք էն թողիով կապուած, ինչ թոկով որ կապիւ էր ստառնէն մեր պապերին»...

Մեր գաւառական գրագէտները ունին մի անհերքելի արժանաւորութիւն, որից մենք մեծ քաղաքներում, գիւղական հասարակութիւնից հեռու ապրողներս բոլորովին զուրկ ենք. նոքա ընդհանրապէս ճանաչում են ժողովրդին: Նոցա մէջ պակաս չեն այնպիսի անձինք, որոնք ոչ միայն լաւ ծանօթ են գիւղացու ընտթեանը, այլ և կորողանում են մտածել նորա զլխով, տեսնել նորա աչքերով, խօսել նորա բերանով. որոնք տեղեակ են նորա լաւ վատ որպիսութիւններին՝ ծանօթ են նորա կեանքի տրտմութիւններին և ուրախութիւններին, որոնք իբրև հմուտ բժիշկներ, տեղեակ են նրա բազմապատիկ ցաւերին և այդ ցաւերը բժշկելու դեղերին:

Պ. Արարատեանցը ցոյց տուեց թէ բաւական է քիչ շատ տաղանդ ունենալ և սիրել հայ գիւղացուն ոչ վերացական, պլատոնական սիրով: այլ զործնականապէս, որ կարողանանք օպտակար լինել նորան: Բայց մեր գաւառացի գրագէտ-

ները, փոխանակ ժողովրդի իսկական շահերի վըրայ մտածելու, փոխանակ աշխատելու ազատել նրան ըստանայի թոկից», նոքա իրանք մի ուրիշ թոկով կապուած են մնում. նոքա իրանց ժականակը կորցնում են անպտուղ աշխատութիւնների մէջ վառաւոր ճառեր և գեղեցիկ ուսանաւորներ «շարագրելով», տխուր ազդեցութիւն մեր գրականութեան անցեալ ճորտասանական սւլլութեան...:

Մինք զիտմամբ չենք պատմիւ «Խեղճ Սիւանարների» գլխի անցըը, այլ յորդորում ենք ընթերցողին 25 կոպէկ չինայիլ յիշեալ գիրքը ձեռք բերելու համար. այդ թէ իրան ընթերցողին մի սոպէ հոգեկան զուարձութիւն կը պատճառէր և թէ երիտասարդ հեղինակին կը խրախուսէր իւր „առաջին աշխատասիրութիւնից“ յետոյ ուրիշ աշխատանութիւններ պարզել մեզ:

Դրիչ, 1877 թ. Ս. Պալստանեան

Փ ո լ ձ"

ուրախ, փարաջէն քաշտալով, ժամ էր գալիս:
Նրա երեսին մտիկ տվողը կիմանար, որ տէր-
տէրը էսօր շափից դուրս ուրախ էր: Հէնց
որ ժամի դուռը հասաւ, «Երբորդը» քաշեց:
Սնկացաւ մի քիչ վախտ: Ժամկոչ Ք ի քա-
նը հէնց որ երկաց, տէրտէրի աչքերը պը-
լըստրատին տվին:

«Ի՞նչ էլաւ, Քիքան» — հարցըեց տէրտէրը:
— Բերլմ են, տէրտէր ջան. — Քիքանը էս
ասելուց յետոյ՝ մի սալ քարի տակից հանեց
ժամի ժանդուած բալանիքը:

Ժամի դուռը հէնց որ բաց էլաւ, մի տե-
սակ նամ հոտ ընկաւ տէրտէրի քթովը: Ժամ-
կոչն էս իրիկու էնքան վերհատեց խեղճ
զանգակներին, որ գէղը դրմբացն ընկաւ: Ժա-
մի դիմացի տանից բերլմ ին խտած մի-մի
պարուրներ էրկու պառաւ կնանիք: Տէրտէրը
ծոցից կանաչ — կարմիր թէլ հանելով հորըմ
էր: Պառաւները էրկու պղուզով տաք չուր
բերին ու ժամի դռանը զրին: Քաւորներն
եկան: Էս վախտը զարիք մարդն էլ կիմանար,
որ տէրտէրը հազրվոմ էր կնունք անելու:
Ժամի դուռը մարդկերանցով լցվեց: Տէր-
տէրը սկսեց կնունքը ու երկար վախտից յե-
տոյ փիլօնը վրէն, պարուրները քաւորների
խտին, շարական ասելով, ճամփա ընկաւ:

ԵՐԿՈՒ ԹՈՒՄԲ

Ա. ԳԼՈՒԽ

Որն եկել, թէքվել էր, աղվեսաշոքն
ընկել էր: Արևի մէջն էլ զօրութիւն չէր մնա-
ցել. վախտ-վախտ կապուտ ամպերի տակից
դուրս էր գալիս, էլի ծածկվը: Հեռվից երե-
ւըմ ին մին-մինի քամակըմ կանաչ սարերը:
Ծմակների դօշերըմ ամլիկ գառները վշտի
ին տալիս իրանց մօր հետ ու եզների մի քա-
նիսի ճտի զանգակների ձէնը զընզըմ էր հեռ-
վից: Քիչ վախտից յետոյ հանդարտութիւնը
փուփեց տմեն տեղ: Զէն ու ձունը քանի կենըմ,
կարվըմ էր... Արևի թէքված շողերը դեռ
երկըի վրա՝ ին: Շ... գէղի տների ու բարձր
ծառերի կատարները դեռ շողզողըմ՝ ին: Ամեն
շնչառը իր տունն էր քաշվել. հնձվորնին էլ
մանգաղներն ուսին եղ՝ ին գալիս արտերիցը:

Միկնահովն ընկել էր. երբոր Տէր-Մար-
կոսը գէղի վերի ծէրըմը երկաց. նա ուրախ

ամբու ով նաև խոյառաց մէն այստի սկսուած
դժա զն ըստանելի շրաբն խան մշսմդն աղմ

Ծատուրանց տունը գէղի մէջ լաւ տներից մինն էր յիշվըմ: Էստեղ էսօր մեծ պատրաստութիւն կար: Տան կողքին կապած էր մի երկար գոմ: Տաշտմաղանց Գալուստը տուն չունէր. Ծատուրանց Սէրովը տվել էր նրան իր գոմը: Երկուսն էլ մինմի հետ աղքօր պէս եօլա ին կնըմ: Աստօծ էլ սրանցմի աչքով մտիկ արաւ ու էրկսի կնիկն էլ մի գշերըմը պարկեցին. Երկսի պտուղն էլ աղջիկ էլաւ: Սէրովիր քասիր Գալուստի բանն եօլա տանելու հմար, էնհէնց կարգագրեց, որ մի օրը մէկնունքնին ու խարջնին մի անի: Եղափէս էլ արաւ: Երկար գոմը նշանակվեց մարդկերանց հաց ուտելու հմար, պստիկ օթախն էլ կնանունց ու ծըննդկանների հմար:

Պարուրներին տէրտէրը ծննդկանների գոքը դրեց ու էնտեղից մարդկերանց հետ մտաւ գոմը: Գոմի կէս տեղըմը օջաղի վրա դրած ին կերակրի պղնձները: Զեռի ջուրը բերին. սուփրէն քցեցին. թէ տէրտէրը, թէ ղօնաղները համ խօսըմ, համ ուտըմ ին:

«Տէրտէր ջան, — հարցրեց նստողներից մինը — երեխանց անունը ի՞նչ կրիր»:

— Մնինը Հուճուլի, մնինը Բուճուլի — պատասխանեց տէրտէրը ծիծաղելով:

«Եղ ի՞նչ անուններ ա, որ կրել ես — ասեց մի ուրիշը — էղ քանի հետ եմ ասել, թէ ձեռը վերկալ էղ «թուրքի» անուններիցը...»

— Հանաք եմ անըմ, օխնեալ, ինձ էնքան էլ նըանցից չգիտենաս... ես, էնքան, ինչքան դուք էք ուզըմ, որ մեր երեխանց անունը իրանց զօչաղ պապերի անուններիցն ըլի, էրկու էնքան ես եմ ուզըմ... Աստօծ տա. որ էղ բարի նախանձը ձեր սրտներըմը աճի, զօրանա... Երեխանց մի անունը «Շուշան» եմ դրել, մէկէլինը «Անուշ»: Գիտէք թէ դրանք ովքեր են: «Շուշանը» մեր քաջ Վարթան զօրավարի տղիկն էր, որ հէրը վրացու կռապաշտ թագաւորին տվեց: Շուշանը թագաւորին քրիստոնեա շինեց ու նրա ձեռովն էլ նահատակվեց՝ իրան հայութիւնը պահելու հմար: Նրա սուրփ գերեզմանը հմի էլ Թիֆլիզու Մէտէխ բերթումն ա: Նրա սուրփ օրինակն անպակաս ըլի մեր Հայ-Ազգիցը:

«Այի աջիդ մատաղ, տէրտէր ջան, — խօսեց մի ուրիշը — էղ հէնց պէտք ա ըլի, է... Բա որ «Շուշան» չդնէս, ոնց կլի. Ետոյ ուրիշ անուն դնելով Շուշանի սուրփ անունն էլ կկորչի, նրա սուրփ շնօքն էլ մեր աղջկերանց վրա չի ըլիլ»:

— Մէկէլի անունն ի՞նչ ա: «Փորիդ ցաւը գիտեմ, ուստա Մարուք»...

Մէկէլի անունն էլ «Անուշ» եմ դրել: Դա
էլ մեր թագուհին էր, որ ազգի հմար քիչ
լաւութիւն չարաւ: Աստօծ մեղանից էդ դայ-
դի կնանիքն անպակառ անի...»:

— Փառոց կենաս, տէրտէր ջան: Այի,
հմի ի՞նչ կասեմ...:

«Խօսքը կտուրը մի քցիլ, ուստա Մա-
րուք, էրէկ իմացա, որ Օսէփն ու դու ու-
զում էք պարուրների օրօրօցը խաղէք, (*)
ձեր տղերանց հմար: Էս տանիցը միմին բու-
ռը մոխիր վեր ունէք: Աստօծ բախտաւոր
անի: Դէ, էլ որ օրին էք մնլմ: Քանի հը-
վաքած ենք, ասացէք օխնենք էլի...»

— Դէ տէրտէր ջան, ասողը դռւ եռ,
ասա, էլի...:

— «Լաւ: Ի՞նչ էք ասըմ, ուստա Մէրոփ,
բարեկամ Գալւսստո:»

— Քու քէֆն ա, տէրտէր ջան: Մէնք
էդ բանի հմար էլ ենք խօսացել:

«Բաս, գնացէք, երեխանցը բերէք»:
Ժամկոչը դաւրս թուաւ:

«Էդ շատ լաւ ադաթ ա—ասեց տէր»

*) Մեր պապական սուրբ ադաթներից մինն էլ էն
է, որ երեխանց օրօրօցը խաղըմ են, նրանից եռոյ էն ե-
րեխն պատկանըմ ա օրօրօց խաղողի տղին ու երոր տղին
մեծանըմ ա, աղջիկո հատ մին-մինի առնըմ են: Երա օգուտ-
նից մինն էլ էն որ երեխանց սրտի մէջ փոքրութիւ-
նից սէրը աճըմ, զօրանըմ ա...»

տէրը: Ով գիտի, — մենք մահինն ենք, մահը
մերն ա, — սաղիքան նշանենք աւելի լաւ չի»:

Տէրտէրի խօսքը բերնըմը մնաց: Տուն
բերին մի կռնից բարուրներին, մէկ էլ կըռ-
նից էլ Օսէփի ու Մարուքի մատղաշ տղե-
րանցը: Մարդկերքը, աշբները չուծ, մտիկ
էին տալիս տէրտէրին:

«Առաջ դռւ, ուստա Մարուք, աղջկե-
րանց որին ե՞ն ուզըմ»:

— Որին կտաք, տէրտէր ջան:

— Ես անուշին եմ ուզըմ» — բղավեց
Օսէփը:

— Զէ, ընչի — գոռաց Մարուքը — քասիք
մարդը քասիքի հետ կըարեկամանա...

«Զէ! ըլիլ չի»:

Ո՞նց թէ չէ. Ես առաջ եմ ասել:

«Սիրելիք, ընչի էք կոիւ քցըմ: Էս
բանըմն ՚ի նարկէ, Աստծու մատը խառնա!
թողէք տղերքը աղջիկերանցը պաշեն! ով
ում առաջ կը պաշի, նա էլ նրանն ըլի»:

— Լաւ! լաւ — բղավեցին ամենքը:

Զեոր քսելով աղերանց գլխին «Վար-
թան ջան, Վարդ ջան, այի. «զի զի» — ա-
սեց տէրտէրը — գնացէք, պաշեցէք, ով թէզ
կպաշի նրան «նշխարք» կտամ...»

Զէն ու ձուն չէր դուս գալիս գոմի-
ցը: Ամեն մարդ շունչը փորն էր բցել,

մտիկ էր անըմ: Կասես թէ նրանց առաջին չորս հրեշտակ աշկարա խաղըմ՝ին... Մարուքի տղա Վարդանը վագելով պաշեց Անուշին: Ամենքն էլ ծափ տվին: Ծիծաղն ու ուրախութիւնը խառնվեց մին-մի: Շատերի աչքից արտասունք էր թափըմ: Օսէփի տղէն, Վաղօն, ՀՀկլված չէր իմանըմ ի՞նչ անի: նա էլ ընկաւ որ պաշի Անուշին. աէրտէրը արգելեց: Վաղօն վազեց դպա Շուշանը, Վարժանը նորից ընկաւ Անուշի վրա ու երկուսն էլ էրկար պաշպչեցին պարուրներին: Ամենքն էլ ջուր կարեցին ուրախութենից: Պարուրները լաց՝ին ըլլոմ. երեխերը պաշպչըմ, մարդկերքն էլ «Աստօծ շնորհաւոր անի»՝ին բղավըմ: Էս վախար, կասիր թէ, չորս երեխանց միջին չորս հրեշտակներ, թէվերը փռած, տղերանց պաշնանը աղջկերանցն՝ին տալիս ու խօսք տալի, որ սրանց ամեն ժամանակ օգնական կլեն...

Ա՛խ. ի՞նչքան լաւ բան ա էլել անմեղութիւնը... ի՞նչքան սուրփ բան ա էլել հրեշտակներին աչքով տեսնիլը... էլ ընակ մեր ամեն բանըմն էլ էսհէնց անմեղութիւն ու սրբութիւն ըլէր. էրնակ մեր ամեն բանըմն էլ ընութեան պոչիցը բռնէինք...»

Հէրօինած տէրտէրն էլ մի քիչ վռագող մարդ էր:

— «Պահպանիչ» ասելուց ու գինութաւը մի քանի հետ դարդկելուց յետոյ՝ տեղիցը վերկացաւ: Մարդկերքն էլ տեղներիցը ծուլ ելան. Սուփրէն վերքաղեցին: Տունը դադարկուեց: Միայն թէ՝ Վարդանն ու Վաղօն թէզ չհեռացան էստեղից: Նրանց սիրտը կպաւ էս տան հետ, չունքի՝ Տաշտմաղանց ու Ծատուրանց տան միրքը սրանց ջբըմն էր հատնըմ: Սրանից յետոյ՝ աղջկա ու տղահերերը ամեն ազիզ օր մին-մի տեսութիւն՝ին անըմ ու էսպէսով իրանց բարեկամութիւնն աւելի հաստատըմ...

Փ.

Անց էր կացել տասնը հինգ տարի էն օրիցը, երոր նշան գրին երեխանցը: Էլ չկար առաջվան սէրն ու բարեկամութիւնը աղջկերանց ու տղերանց հօրանց աներըմ, չունքի տղերանց հէրերը մի քանի տարից յետոյ մեռան ու էն ժամանակից արդէն Սէրովին ու Գալուստը մտքները փոխեցին, որ էլ չտան իրենց աղջկերքը անհէր—եթիմ տղերանցը: Էգալէս, մի դարդակ բանի հմար աղջկահէրերը ուղեցին հեռացնել իրենց հին բարեկամ աներիցը: Միայն կհովանին էն սրտները որ մին-մի հրեշտակի թեվի տակին կպել՝ին, որ թէ և ծածուկ, բայց տասնը հինգ տարի սիրել՝ին մին-մի. ա-

սենք ուրիշ ոչինչ. հէնց մի դարդակ մինմի
«ջան»՝ին ասել. ուր մնար, որ էնհէնց
վախտ էր պատահըմ, եր Շուշանի ու Ա-
նուշի աչքը ջուր էր կտրըմ, էստեղնստած
ծկրակըմ ՚ին մինչի լուսը, թէ եր պէտք ա-
գան իրանց սիրելիքը...

Եարաբ ի՞նչ լիզու կարա պատմիլ, կամ
ինչ ձեռը կարա զբիլ էն սճաթը, եր լուս-
նիակ գշերը Վարթան ու Վաղօն բաղից գո-
ղացած մրգերով ջբները լիքը գալիս ՚ին
սրանց մօտ, նստըմ ու թաքուն խօսըմ,
խօսըմ, խօսըմ... գշերի վրա գանգատ ա-
նըմ. թէ խի ա թէղ լիսանըմ, կամ որձակ-
ների վրա չարանըմ, որ «Ճուղըուղու» չը
կանչեն ու մին-մնի խօսք թողան որ լսեն...
Էսպէսով անցկացրած տասնը հինգ տարե-
կան սրտները կարին մին մնից ջոկվել, կա-
րին հեռանալ... Ի՞նչ ասես էն մարդուն,
որ չգիտէ սէրի անունը, որ չի կապվել սէ-
րի ջնջլովը. չի ընկել սէրի ճանգը... Պա-
ռաված սրտըմը սէրը հանգած կլի, նրանց
հմար սէրը գուօշ չաժի...:

Պղպան քամին մարթի ականջ էր քա-
ռացնըմ. մութն էնհէնց էր աշխարքս պա-
տել, որ մատգ աշք կոխէիր չէր տեսվիլ:
Ամպերը մին-մնի շալակ էլած, երկնքի երե-
ս մէնհէնց էին սեացել, որ կասէիր աշ-

խարքս մթնի ծով ըլէր: Ծովինարնէլ (փայ-
լակը) տիրած երկնքի երեսին տեղ չէր
գտնըմ. կամ սարերի գլխին էր պլստրատին
տալիս, գշերվա մութը փարատըմ, կամ եր-
կինք տանըմը... Միայն շները կալանչ կա-
լանչ ՚ին գալիս սոված գիլանունց օռնալու
վրա: Սարերը դրմբըմ ՚ին նրանց ձէնիցը...
Էս վախտը Ծատուրանց Սէրովի տան կտերն
էրկու հոգի հուփի ու կուչ անելով, դուշը
կորցրաց հորսկան պէս, դէս ու դէն ՚ին ընկ-
նըմ, նրանց ուռած փէշերիցը տանձ ու խըն-
ձորը կաթըմ էր. ձեռներին աշխարքիս ա-
մեն ծաղիկներից շինած փնջիցը քաղցը հոտը
ամեն տեղ փովը...


— Հմի, քէնակալ, վարթիս հոտը նրանց
քթովն ընկաւ... Թէ որ անծված տանըցիքը
քնած չլէն, նով գիտի դուս գան... Գնանք
ախպածակի կուռը, թէ չէ կարելի ա տեսնող
ըլիս...

Ախ եարաբ սէրը լիս ու մութ, սուր
ու թուր ա հարցնըմ...

»Վարթան, կամանց խօսա, ձէնըդ իմա-
նող կլի... խօսըմ էր Վաղօն:

— Զէ! դու արի: Հիմի Շուշանը ու
Անուշն իրար ծոց արած քչփչըմ կլեն: Մի
քանի խընձոր քցենք... Համա կամանց...

Ծովինարն էլի չէր գինջանըմ: Մարդիս
աչքերին ամեն բան մինարն երևում էր, մին



կորչըմ, մին լուսաւորվըմ էր, մին մթնով
պատվըմ... Վախիցն էս վախտին ոչով տա-
նիցը չէր դուս գալ, միայն սէրը ահա ու
վախ չի հարցնըմ...»

Հէնց էս ժամանակ փորըսողանողների
մօտ թըրմիոց լսվեց:
«Վաղօ, շունչդ փորդ քցի! Բուրուն պա-
հող կա!!... (Փէյնի տակից մինը կամանց
ձէնա ածըմ:)

— Զէ! Վարթան ջան, լաւ չես վարայուրդ
արել, էդ կասես Անուշիս ձէնն ըլի...

Ղօթթ... Դէ, առաջ զնանք! բաղտնիս
կրանի թէ որ «Նրանք ըլեն»...

Կամանց — կամանց փորըսողաներով
բարձրացան փէյնի վրա: Տղերանց շունչ
քաշիլ Անուշի ու Շուշանի ականջով ընկառ
թէ չէ, հէնց իմացան Մէրովն ա, տափիցը
կպան, շնչներն իրանց քաշեցին: («Անուշ
ջան, շունչըդ!... Էլի լովիմ ա փէյնի տակից:»

«Վաղօ իմացար, էդ Շուշանիս ձէնն էր:
— Կամանց, ձէն տվեց Վարթանը — Ա՛ն, էդ
լուտրած սրտիդ մատաղ!...»

— Կաց! Վարթան, հրէս ծովինարը կիսա-
դա, ուր որ ըլեն կերեւան... Կաց! մի գնալ
նրանք չեն ըլիւ...»

«Զէ, նրանց բաղցը հոտը քնթովս ա
ընկել, նրանք են»:

Ծովինարը խաղաց: — Տես, տես, Վաղօ,
Անուշն ու Շուշանն են... Անուշ...» հոգոց
քաշելով ձէն տվեց Վաղօն: ... Վաղօ
Վաղօ ջան, դուք էք... Սավեց բարձր:
«Մէնք ենք, վախիլ միք, և... էս խօսքըմ
թոշկոտալով տղէրքն ու աղջկերքն էնհէնց
իրար կպան ու մնացին երկար, որ կարելի
էր մի չիբուխ լցնել ու քաշել.
«Դէ լաւ ա, Վարթան ջան, Վաղօ ջան,
Տերիք ա, տեսնող կլի. եդ քաշվեցէք»...
Համա որամեղ...»

Ո՞նց ՚ին եդ քաշվել. սէրը թոկ չունի,
որ կապն եդ անվի. սէրի տունն Աստօծ քան-
դի. որ մի բան մնից կապեց էլ-եդ չի ան-
պիլ... Սրանց բաժանողը միայն մահը կլի...»

Էս ժամանակըմ, հէնց գիտենաս սար,
քոլ կազնած նրանց վրա ՚ին մտիկ տալիս ու
նրանց սէրը վայելըմ... Ուրախութէնից ու-
ժինչ չին կարըմ ասկիլ: Տղերանց լիզուն
կապ էր ընկել ուշընին կորել, աղջկերանց
էլ նրանցից վատթար... Միայն սրտներն էր,
որ մին-մինի հետ լիզու էլած ձէն ՚ին տալիս...»

«Վարթան ջան, կմկմացրեց Անուշը-ես
գիտեմ, որ մեր սէրը ձեզ փորձանք պէտք
արելի...»

Ի՞նչ անենք. Աստօծ ջան, որ ջուրն
ընկնենք... Քանի ձեզ ուշ ենք տեսնըմ, էն-

քան սրտնիս էրվըմ փթօթըմ ա... Մեզ հմար էլ բան ու գործ չկա, էրկսով նստած ձեղ ենք տեսնըմ»...

Պատասխան չկար. Նրանք-էլ տագ արիոյ իրանց սիրեկանների դոշին կպած, Միայն թէ չեմ իմանըմ, ինչի համար՝ Անուշը Վաղօխ հետ խօսելու տեղ Վարթանի հետ էր խօսըմ, Շուշանն-էլ Վաղօի հետ:

Տղերանց, մինչի հըմի պապանձված լի- զուն իր կապը կտրեց. սիրեկաններին իրանց առաջը տեսնելով, իրանց թագաւոր համա- րեցին...

«Շուշան ջան, լիզուտ ծամիմ-ասեց էր- ված Վաղօն—էրկու էնքան-էլ մենք ենք էր- վըմ ձեզ հմար... Թող բան չկա-ձեր հէրերը ձեզ զոռով ուրիշ մարդի տան»...

—Ետոյ մենք—խօսքը կտրեցին Անու- շն ու Շուշանը—մենք ձեզ կթողնենք... Մի մեզ էլ հարցրէք, է... Առաջ մենք կմեռ- նենք, ետոյ թող ջամդաքներս գիլանունց հետ նշանին...

Վարթանը լիզու էլաւ. «Չեզ դուրբան, մեր արինը կարմիր ա, համա մեր սէրը թէժ կրակիցն աւելի կարմիր ա: Թող մեր արինը զուրբան ըլի ձեզ, միայն թէ էսօր մեր վեր- ջի տեսնելու օրն ա... (Վերջ խօսքը, կասետ թէ, ինքն-իրան դուս պոժաւ նրա բերանից)»

Լսել ենք, որ էս շաբաթ ձեզ պէտք ա նշա- նին ուրիշի վրա... Հմի թէ սիրըմ էք, լսե- ցէք մեր խօսքեր, Մենք «Անտակ ձորի» դա- չաղ Ալուն պէտք ա գնանք խնդրենք, որ էքուց ձեզ Քոռ-Աղբըի կշտիցը փախցնել տա ու տանի իրանց բինէն: Մենք-էլ էնտեղ կդանք, ձեզ կտեսնենք: Զվախէք, մենք ձեզ հարամի Սէրոփի ու Գալուստի ձեռըմը չենք թողար»...

—Ո՞սց: Մեր գլուխն էն անօրէն թուր- քերին ամնք...

«Զէ, Շուշան ջան—վրաբերեց Վար- թանը—ինձ ճնաչըմ ես, թէ ով եմ... Հայ եմ, հայ, թուրքի արին ծծող Հայ ... Թէ որ նըրանք ձեզ քվոր նման չեն տանիլ, էն վախտը»—

—Էն վախտը—շուտ վրաբերեց Անուշը— Դուք մեզ մեռած կդանէք նը- րանց ձեռքըմը...

«Ինչ ես խօսըմ—բղավեց Վաղօն—թէ որ մենք նըրանց ճանաչելիս չենք, ոնց կա- սենք ձեզ էդ բանն անիլու: Տանը հինգ տարի ա, մենք-մին-մինի հետ ապրելով, հլա մնից մի փիս բան չենք լսել.. հմի խու»...

—Ախալէր, թողէք խօսքս վերջացնեմ, կարելի ա ուշանանք, ետոյ բանը փիս կգա— ասեց Վարթանը:—Հա: Երբոր թուրքերը մը թնաժուէքին ձեր կուշալ կգան, բղա-

վէք ոչ. հետներն, անսամ' ուր կտանեն,
գնացէք... Վախէք ոչ, մենք ձեր կշտին
հազիր կլենք»...

Երեսը կարմրած Վարթանի խօսքը բեր-
նըմը մնաց, չունքի՝ ծովինարը խաղաց ու
փէյնի ծէրին թուրքի պառակի պէս մի պ-
պղած բան տեսան... Աղջկերքն ահու գե-
տինը մտան ու քարացած մնացին. միայն
ասլանի պէս տղերը, տաք-տաք պուշները
նրանց թշերին կպցնելով, ուշքի բերին...

— Վախիլ միք, — ասացին տղերը — ա-
ռէք միրքն ու վարդի վնջները... Սրաով կա-
ցէք»...

Տղերանց էս վերջին խօսքերն ամեն
բան աղջկերանց մտքիցը քցեցին ու «շատ-
լաւ» խօսքերն ասելուց յետոյ, էլ չեմ ասըմ
թէ ինչ էլաւ նրանց հալը...

Բաժանսվեցին համա ոնց բաժանսվեցին...
Կարթացնդ, գու խօսի... Լիզուս զօրըմ չի,
ձեռըս թլանըմ ա, սիրտս թմկթմկըմ... Մի-
այն, ես էսքանն եմ յիշըմ, որ «մն աս բա-
րով» ասելուց յետոյ, ծովինարը գլխին
պլատրատին տվող՝ փէյնի տակին, էլ խօսող
ոչ ով չկար... Սիրահարները քաշվել են:

Պ. Նոր էր ծէրը քցըմ: Խալխն ամենք էլ
իրանց բանն ին գնացել. Գէղամիջըմ, աչ-
քերը չորս արած, կանգնած էր Վիտիս քօխ-
վէն, — որսի էր մնըմ: Բեղերը յոլորիլով էս
կողմն, էս կողմն մտիկ տալով, ճլմկոտոցն էր
ընկել... Հէնց էս վախտը գլխին քորելավ,
օրշտալով, մօտեցան Սերովն ու Գալուստը,
դլուխ տալով «բարբլիս», Վիտիս քօխվա»
ասեցին:

Այի, Ասածու բարին: Էսհէնց վաղ-
վաղ ինչ խաբար...

»Աղջկա տիրունչն — էլ կասեն ինչ խա-
բար»... — Հէր օխնած, աղջիկ ունէք, նշան
գրած ա, էլի...«

«Ում վրա...»

— Էլ ինչ ում վրա: Վարթանն ու Վա-
ղոն պակաս տղերը են..»

«Ղոջաղութինն ինչ անենք. մենք գող
փէսենունց ուէր ենք Որտեղ գող թուրքեր
ըլեն, նրանք էնտեղ հազիր կլեն...»: Գող
մարդը, քօխվա ջան, որ մեծ չունենա, տան
դադրը ինչ կիմանա»...

Բա հմի նրանց ել չէք ուզըմ տան..»

«Զէ, — պատասխանեցին մին-մնի երեսի
մտիկ անելով: Ի բայց ինչ ... ու մէյի լ-լ-լ-

— Դէ, էղհէնց ասեցէք, էլի...

«Դէ, քօխվա ջան, էսհենց վաղ եկանք քու կուշտը, որ մի հալու ճար արես, մեզ, կամ հարկ ըլի կամ թարկու...

Էս խօսքերի վրա քօխվէն մի խելի վախտ մտքի տունն ընկաւ, բեղերը ծամելով մնաց կանգնած:

— Իմ ձեռին ինչ կա, կամանց ձէն ածեց—տղերանց գլուխը ջարդեցէք, որ էլ ձեր դռներովն անց չկենան...

«Հլըմ չի, էսօր-ել փէյնի վրա» «Նըրանց» իզը (յետք) մաշուր էը անըմ. կասես թէ քըշերս-էլ ՚ին եկել: Մի քանի հատ խնձոր-էլ գթա, էն-էլ կասես թէ ձեր բաղի մեծ խընձորիցն ըլէր»...

— Հա: Խեղճ աղբերս էնդուր էր ասըմ, թէ գշերս բաղը գող ա մտել... Բաս լաւ, էդ ես գիտեմ...

«Հա, քօխվա ջան, մենք էլ դրա հմար ենք եկել, Մի կանչեցէք, խօսեցրէք, որ էլ մեր դռներովք անց չկենան: Խու գիտէք աղջկա բանը, կուլականց Մարքարը քանի հետ մարդ ա դարկել նշան դնելու հմար, մենք էդ բանից վախելով մնացել ենք կապված:

Էդ լաւ բան ա, մինն-էլ հաղիք ես՝ իմ կարօի հմար կուզեմ. մայինց գեաղի աշ-քը-էլ վրէն ա... Հմի որտեղ կլին, քանի վաղ

ա մի գէղը թըշշօղըմ քցեմ... էստեղ քօխվէն մի քիչ սուտ չարանալուց ետոյ վրաբերեց: — Աղջիկը աշքերը կապած դուշ ա, ոնց որ հէրն սւ մէրն ուղենան, էնհէնց—էլ պէտք ա անեն... Սէրոփի, խօսք ես տալի՞ս, որ աղջիկդ տղիս տաս:

«Բաշուստա, ոնց որ կամքդ ա... Այի մենք իրար բար մարդ ենք, իրար սազ կգանք:.. Միայն թէ էտոնցից ազատես...

— Շատ լաւ: Ամա... Հա...

«Քօխվա ջան, էլ-միտքդ դես ու դէն ման մի ածիլ: Թէ որ մեզ հետ չբարեկամանաս-էլ, մենք քու ամակը կորցնիլ չենք... մինին էրկու կստանաս մեզանից...

— Զէ, չէ, բարեկամութիւն... Սիրտս ցնծըմ ա: Քու տանիցը մի բուռը մոխիր պէտք ա վերունեմ: Քու երեխերքը եղբավոր են դովլաթ-մալիս ճկատներին գրած... Ես էսօրվանից մարդ կղարկեմ որ, մի անգով «նըրանց փոնեն, ձեռները կապած, բերեն ինձ մօտ... Դուք արխէին կացէք...

«Դրսւստ»

— Դրուստ.

Խօսողները քաշվեցին:

ովոց բժուած և նմրգ նյորօշողի ցըմք զն ա-
պղի լուս քայլաւնեաց առու չփզ զն մէի
ըն և չոր նաբաթ դդացաւ ցըմքը... ուզացա-
ծիր յի ցըմքը մասնքառ միջն և մոլու զո
դու հիրամիսն ուստող կատաղած գետը ան-
տակ-ձորի կէս տեղով, վշշալէ, անց էր
կենըմ, Խըրամի ճախ ափից բարձրանըմ էր
հարիր տարվան ծառերով պատված Անտակ-
ձորը, Մարդ առանց երեսին ինաչ քաշելու,
ուսք չէր կոխիլ էստեղարէնըը, Թուչունք-
ները-էլ ահ ու գողով ին ծլվըմ, Արաջն ու
գէն էր նրա բընակիչը...

Խուլ, ձէնը փորը քցած, մամուտած ձո-
րի կատարին անամօթ մարդու պէս ցցված
էր մի բալագան: Ծովինարն-էլի երկնքըմը
շողշողըմ էր: Էս էն քշերն էր երբոր Վար-
թանն ու Վաղօն հեռացան իրանց նշանա-
ծիցը: Մութը թանձր էր. ծառերի շվաքն
աւելի թանձրացնըմ էր: Էս սաթայէլեան
ձորի մէջ հեռու տեսնվոմ էր բալագանի
կըակը: Բերթի պէս Անտակ-ձորը երկար
վախա իր մէջ զաշաղներին տեղ էր տալիս:
Քանի-քանի եասավուների գլուխ ին կտր-
վել էս ձորըմը զաշաղներին բռնիլու հմար...
Քանի-քանի խեղճ մարդկերանց եզն ու կով
էր մորթվել էս ձորըմը... Բալագանը զաշա-
ղների բնակարանն էր. քառասունից

աւելի սատանի կերպարանքի տէր մարդիկ
նստած կըակի զըափին միս 'ին խըովըմ...
« Ղօչաղ Վալի, էսօր Գալուստի տվարի
գլխին լաւ օյին ես եկել... Բան չկա. Հայիցը
ուսողը լսի փայ կլի... նրանց օջաղը պէտք
ա քանդած»—ասրմ էր դաշաղների դիմա-
ւոր—Ալին:

— էդ ես գիաեմ...

Միայն Վաղօն ու Վարթանը ուշացան...
Ով գիտի էլի քօխվի ճանգն են ընկել որ ի-
րանց ասած վախտը չեկան...

— Ի՞նչ ես ասըմ, էն վախտը կըակ կը-
զցեմ նրա տունը տեղը...

« Տղերը համա ինչ աղջկերք են վրա-
բերեց մի ուրիշը—Հայի աղջիկը հէնց սիրուն
ա ըլըմ... էլ ընակի... »

« Ձէնդ կարի, Օրոնչ, Սուս-կաց, գոա-
նը սաի ձէնա գալիս, տեսէք ով ա»—հրա-
մայեց զլիսաւորը:

Դուռը բացվեց. երկու հոգի տուն մտան:

— « Ալի բարի աջողըմ, Վարթան ջան-
իը ի՞նչ խաբար»;...

— Ի՞նչ խաբար պէտք ա, անիրաւ քօխ-
վէն մեր բանը խարաբ ա արել: Եքուց նշա-
նածու կըան տղին պէտք ա ուզի, Վաղօյինը
ուրիշին:

« Ո՞նց»;...

Տղերքն էլ—չկարացին խոսել...
 «Դարդ միք անիլ վարթան ջան, վաղօ,
 ձեր կալին սաղ ըլի, էքուց ես գիտեմ նը-
 րանք»:...

—Բա էլ ո՞ր օրէն ա մեր էսղդար արած
 աղբէրութիւնը, միտեղ կերած աղուհացը, մին
 մնի «ջան» ասիլը... Բա ի՞նչ անենք. դուշը
 ձեռներներից թրոնցը մեն... Մերը դուք,
 ձերն Աստօծ...

Վախիլ միք, տղերք. ես էնհէնց բան
 կանեմ, որ ձեր նշանածներն էքուց իրիկուն
 էստեղ գթնէք», ասեց Ալին:

—Մենք էս քշեր աղջկերանց կշտին՝ինք.
 ասեցինք, որ էքուց իրիկու Քօռ Աղբերի կշ-
 տին կենան. մեր ընկեր թուրքերից էրկուսն
 կդնան կփախցնեն ձիով ու ուր որ-էլ տան-
 են, ձեն չհանէք, հետները գնացէք...»

«Աղա, Վալի, Քարիմ-բզավեց Ալին՝ է-
 քուց ձեր պարտքն աղջկերանցն էստեղ բե-
 րին կլի:» Հրամանս լսրմ իք: Օձի պէս պէ-
 տք ա փորբառդանէք, դշի պէս թոչէք, մի
 խօսքով, ոնց որ ըլի, պէտք ա էն աղջկե-
 րանցը դշի թեւով էստեղ հասցնէք:

—Շատ լաւ, աղա ջան. Մենք էս շա-
 րաթ միալն մի հրաման ենք կատարել: Գա-
 լուստի կովերը գողանալուց սավայի ուրիշ
 բան չենք արել... Արխէին կացէք, նազին

գիտի իր սազին:

«Դէ, վարթան ջան, վաղօ, ձեր բանը
 պըռծար ա—ասեց դվիստորը—Դուք էլ-էս.
 տեղ մնալ միք, գնացէք ձեր բանին կացէք,
 միայն ընկերներիդ խրատեցէք, որ մեզ հետ
 լաւ կենան: Ի՞նչ անենք, թէ մենք չայ չենք?
 Հայ չենք, որ Հայերէն խօսըմենք, Հայի հա-
 ցն ուտըմ: Ով գիտի, կարելի ա մի օր էլ
 կնքվենք»...

—Աստօծ տա, Ալի ջան վրաբերէց
 Վարթանը: Միային էդ հլա մնա, Վալի, Քա-
 րիմ, ինձ խու ճնաչըմ էք... Վայը կգա. ձեզ
 կըտանի, թէ որ սաղ—սալամաթ «Նրանց»
 էստեղ չէք բիրել...

Վարթան ջան, Ալլահը վկա—

—Տօ ախմախ քեզ քանի՞ հետ եմ ասել,
 որ Ալլահ մի ասիլ, Աստօծ ասա—չարա-
 նալով բղավեց Ալին...

«Խրատներս հլա զրա ականջին քեար
 չեն արել վրահերեց Վարթանը:

—Հա, Աստօծ վկա, ոնց որ դուք
 մեր հալալ աղբերն էք էնհէնց-ել «Նրանք»
 մեր հալալ բիրն են: Մենք գիտենք, թէ
 ոնց կրերենք...

—Դէ, մնաս բարով, Ալի ջան, մենք
 գնըմենք, մեր ուշքը եղա. տղէրք, ձեղ բա-
 րի գիշեր...

— Զեղ լիս բարի, ասլաննի ջան,—ըղավեցին թուրքերը: Վարթանն ու Վաղօն դուրս գնացին:

Զարհուրանքը թուրքերին պատեց: Երկար ժամանակ բարագանի մէջ ոչ ով չէր խօսը: Էս կարիճների շուտ գնալն ու գալը դարմացը ել ու ամենքինք քարացը ել էր: Գլխաւորը մտքի առւնն էր ընկել:

Էս վախտը բարագանի պուճախի մթնի մէջ երկու հոգի քչվչը մ'ին:

«Ի՞նչ լաւ կի, է—ասըմէր նրանցից մինը — էս օրը Վարթանի նշանածը բարատեղերը աչքիս ընկաւ»...

Օրուջ, գիտես, որ Վարթանն իմանա, թէ իր նշանածի վրա ծուռն աչքով ենք մտիք տվել, ինչ կանիք... Գրան հլաւ լաւ չես ձանաչը մ... թէ խելը ունեն մտքիցը, հանի...

«Ի՞նչ եռ խօսը: Դու հլաւ «նրանց» տեսել չես, երոր աչքիդ տուածին կաղնած կլեն, էս վախտը դու էլ մի դօչաղ հայ կդառնաս. արինը աչքերդ կկոխի»...

«Օրուջ, սնւայ Քանի Վարթանի արած դօչաղութինին միտս եմ բերըմ, ջանս գողաընկնըմ...

«Լաւ, ետոյ կխօսենք, իմանող կի»: Երկուսն էլ սուս կացան:

Հէնց էս վախտը առւն մտան մի քանի

եարաղաւորված տղերք: Սրանք էս աւազակ-ների ընկերներիցն ին գնացել ին մօսիկ տեղերից ոչսար գողացել ու հմի բիրել ին բարագանը: Թուրքերը դիմին էլ դուռ թափ-վեցին, որ բերած հորսը տեղից-տեղ անեն ու գան, նստեն իրանց քէֆը քաշեն... ամեն ու դուռ գնացը մաս ու գույնը բարագանը բարագանը... Պ.

Ամեն տեղ մութը սկսել էր փռվիլ: Բանվողները եղ ին գալիս չութ վարելուց: Էս շաբաթ նրանց մեղքից արեւ չէր գուս գարիպ ամբերի տակից: Անձրեւն էնքան եկել էր, որ ամեն տեղ քարերը հողի տակից բաց էլած մնացել ին սուտկած էշի ոսկուների պէս չաղբախըմը: Տեղ-տեղ աների հերթիկ-ներիցը հաստ սնի պէս ծուխը երկրից երկինք: Էր կպցնըմ գեղըցու տունը: Տկլոր երեխերքը ծրւծւան տան օջաղի առաջինն ատած վրթվրթը մ'ին. միայն քօխվա վիտիսի տանն ամեն բան լիութեան մէջ էր:

— Երեխերքը կուշտ կերել կուշտ-ել քնել ին:...

Գէղի վերի ծէրըմը տներից խոռված մի մութ գոմի մէջ երկու հոգի ախ ու վախ քաշելով կուշտ «օխնանք» ին դրկըմ դպա քօխվի հօր գերեզմանը: Գոմի դռանը հինգ չոմբախաւորված տղերք գեա գնըմ—գալիս

ին գեա կանգնած ականջ դնըմ:

«Վարթան էս օյին էր, որ մեր զլիսին
ըերեց էդ անօրէնը» —խօսըմ էր գոմի մթնի
մէջ մինը:

—Հրեղէն սուրը մտնի դրա ջանը, ինչ
քօխվա որ դա ա: Ասենք թէ մարդ եքա
մենդալի տէր ըլի, պղընձի կտոր ունենա
դոշին քաշ արած, էնա մարդի անմեղ
տեղը պէտք ա նահատակի...

Բա ո՞նց խլի մեր նշանածները: Հրեղէն
սուրը, առաջ Գալուստի ու Սէրոփի տունը
մտնի, ետոյ էդ մարդագէլի ջանը! նրտնք
որ հիս չին արել դա էլ անմեղ էս լվանոնց
մէջը չէր քցիլ մեզ: Հմի տէրն ու տիրականն
նկ ա, հմի էդ անօրէնի ձեռիցը մեզ նկ
պէտք ա թափի»...

—Տօւ մեր դարդն ես քաշըմ. Հմի
զիտես էն „խղճերի» հալն ո՞նց ա: Հմի ով
գնտա «նրանց»-էլ մի ուրիշ գոմ էն քցել...
Դու էստեղ տես որ թուրքերը գան ու չկա-
րենան զթնեն...

«Կամանց խօսա, Վարթան, դուանը
թեւ էլած շները բան կիմանան»...

—Տօ էլ-կամանցի վախտն ա... Տօ
մենք էստեղ ընկած, ախր...

»Սուս, Վարաան, լիզիդ օրօն արա, վա-
խիլ մի, մենք հրէս, ո՞նց որ ըլի համ մեզ

կազատէնք, համ մեր նշանածներին: Գիտես
ո՞նց: — Երանը կաղնող շների չոմբախները բո-
լա, էլի... Համա էլ-էլ վախըմ եմ մարդ
մեռնի, տո... Դավի-դառարիցը հեռու կաց...

—Վաղօ, գժվել ես... Էս կոներն Աստօծ
էլ-որ օրէն հմար ա մեզ ավել, որ անմե-
ղութիւնը թողանք ոտի տակ ընկնի..., Բաս
կովերն ի՞նչի են հարու տալիս իրանց ձեռը
տվողներին...

«Բաս մի դարդակ... հրամանի գերի դառ-
նանք...»

«Կամանց, սուս...

—Ի՞նչ կամանց... Ես կնիկ չեմ, որ լվա-
նոնց հետ կովեմ. լուն կծըմ ա, սպանըմեմ,
բա էն մարդը, որ անմեղների արինը ծըծըմ
ա, նրան սաղ թողամիմ...

«Վարթան, գլխիդ զուրբան, կամանց...

—Տօ ձէնդ... վեր:

«Ո՞ւը»...

—Ազատվենք...

«Կաց, հա կաց թող քնեն»...

—Իդիթը քնածի ընկերը չի: Մենք սաղի
հետ բան ունենք...

Ես խօսքըմ մթնի մէջ Վարթանը դէս
ու դէն ընկնելով, գոմի սներից մնին էրկու
ձեռով էնհէնց քաշեց, որ կտուրը փուլ եկաւ:
Հէնց էս վախտը հեռվից՝ մի քաշտ լավեց

ձէն ու ձուն, աղաղակ, գոռոց, բղավոց...
— Վարթան, կաց, կաց... Հըէն գէղը վայ-
վլիկն ա ընկել: Ո՞վ գիտի թուրքերն իրանց
բանը տեսել են... Կաց... Հմի, որ մենք
դուս գնանք հէնց կիմանան, թէ մենք ենք
փախցրել աղջկերանցը...

Վարթանն էս խօսքերը հենց որ լսեց,
մուխն էնհէնց բօշացրեց, ոնց որ տաք երկա-
թին ջուր ածես:

«Հա Վաղօ ջան, լաւ ասեցիր: Հմի մենք
փրկված ենք, վախիլ մի, Աստօծ մեր կուռն ա...»

Երկնքի երեսն էնհէնց էր սեացել, ոնց
որ սե սաջի երես. Էս հագաղլմ քօխվէն մի
քանի շաբկանց մարդկերանց միջին Գալուս-
տի ու Սէրոփի հետ մարդ էր զրկըմ էս
կուռ, էն կուռ:

— Քօխվա ջան, գլխիդ դուրբան, աղջ-
կերքս...» Բղավըմ' ին Սէրոփին ու Դալուստը:

Սիր բանը ոնց էլաւ-հարցնըմ էր
քօխվէն-իրանք աղբուրը քնացին, թէ՝ դուք
զրկեցիք. հետները՝ խու մարդ չկար:

«Չէ, չէ, ոչ ով չկար: Մեր շաշ օղլուշաղն
ասել էր, թէ թռղ նշանի հացը իրանց բերած
ջրովը հունցվի. աղջկերքն-էլ ուսել ին կուժը
ու գնացել դպա աղբուրը: Էլ բանի խարա-
բութիւն չունեմ. մնէլ էն իմացանք, որ տա-
բարածները բղավըմ են «հայ տարան... Աղջ-

կերանցը փախցրին... տարան...

— Բաս աշքներդ լիս, էքուց լաւ նշա-
դրէք կունենանք...

Էս խօսքըմ աղջկերանցը ման եկող տը-
ղերքը թէզ եդ եկան... Ամենքն-էլ ասըմ ՚ին
թէ «աղբը չորս կուռը ման եկանք, բղավե-
ցինք, ձէն ու ձուն չկար... Աղջկերանց փախ-
ցնելու վախտը քօշերի մի հատը վեր էր ըն-
կել, կոտրած, ջարդուփշուր էլած կժերի
հետ...»

Վայ, քօխվա ջան, գլխիդ դուրբան...

Վայ բալա...

«Ինչ էք լաչարի պէս վայ տալիս: Հմի
ու էս ստ (քննսւթիւն) պէտք ա անեմ: Լացիցը
օդուտ չկա: Դուք էն ասեցէք-Վարթանն ու
Վաղօն գոմըմը փոնված են, նրանք կարող
չ՚ին էդ բանն անիլ, բա խիալներդ ում վրա
ա գնըմ...»

— Բա գիտես ոչ: Նրանց ընկեր դաշաղ
թուրքերը հալբաթ նրանց դուսաղ ըլին
իմացել են ու ջզրու եկել փախցրել են...

«Հըմմ... բաս լաւ, ես բանը խօդը
(Ճամփիէն) կքցեմ: Աղա-Պետո-բղավեց քօխ-
վէն զզրի վրա, դնա էս սհաթին Վաղօին ու
Վարթանին Սէրոփանց տուն ըի, ես նրանց
էնտեղ ու էս ստ պէտք ա անեմ...»

Ցրտից վախող ճանճի պէս պղպղալէ

գզիրը ծլկեց։ Շներն ետնեն ընկան, համա-
անիրաւ Պետօի գագանակը նրանց իրան
ճանաչիլ ավեց։ Քօխվէն մարդկերանց հետ
գնաց Սէրոփանց ոռունը։ Գզիրը գնալն ու
դուսաղներին կապած Սէրոփանց ոռուն քե-
րիլը մին արաւ։

Վաղօն ու Վարթանը ապահնի պէս մինչև
իրանց վաղվա տների տան գուռն եկան երոր
համան տան հայաթը, կոներնին թլացան։ Էս
սհաթին իրանց անցկացրած օրերը միանին
եկաւ։ Իմացան որ մի օր էս տան ազիդ փէ-
սէքն'ին. ջրները լիքը իրանց նշանածի երեսը
լիզըմ'ին, ձկա ձեղի արժանանըմ, համա-
հմի մարդասպանի պէս, կապօտված են գալիս։

Էս սհաթըմը Վարթանը կոներն հէնց որ
մին մնի քսեց, ջուխտկակառ թոկը միջիցը
ճոթաց։ Գզիրը ահու չորացաւ։ «Աղա լինչ
ես անըմ, քօխվէն գլուխդ կպուկի...»

— Զէնդ կտրի թէ չէ միրուքդ ձեռիս
կմաս, գոռաց Վարթանը ու Վաղօի ձեռների
կապն-էլ եղ արաւ։ Էսպէսով տուն մտան,
համա վայէն տուն մտնելուն... Տունը, օջաղը,
երեխերքը, ամենքն-էլ, լիզու էլած, յիշըմ'ին
Շուշանին ու Սնուշին։ Ղօրթա, տղերանց
աչքը թաց չլաւ, միայն թէ գիտըմ չեմ սրտ-
ներն ոնց էր...
՚ի հարկ է, քօխվէն հէնց տեսաւնրանց

կոներն եղ արած թէ չէ՝ կտաղեց գզազվեց։
«Աղա-Պետօ, սրանց կոներն առանց իմ բրի-
կազի (հրամանքի) ով ա եղ արել...»

Վարթանի աչքերը պլստրատին տվին։
Ո՞վ ա եղ արել հա-գոռաց նա-բոլ չէլաւ, որ
քնած տեղերնիս, անմեղ, մեղ կապիլ ես տվել
ու գոմը քցել, հմի էլ ասըմ ես՝ թէ ով ա
եղ արել։

Քօխվէն կրմրատակեց։ «Գիտես թէ ում
հետ ես խօսըմ... Տեսնըմ ես գօշիս մենգալին։

— Մենգալովդ ես վախեցնըմ... Դա ինձ
հմար գոռշ չափի։

— Տի մնէ գնալի՞շ (ինձ ձանաչում Բո)։
Կոտրտեց ոսերէն քօխվէն։

— Ես ոռւս չեմ, ես հայ եմ՝ հայ... Խօսք
ունես հայերէն խօսա, թէ չէ խու հրէսս...

Քօխվէն ահու էլ-ձէն չկարաց հանի.
միայն ծիծաղելով, Վարթանին թողած, կող-
քի մարդկերանցն էր մտիկ տալիս։

«Փուչ կենթանի... Ուզըմ ես զոռով
ապատվես... Ո՞ւր են էս մարդկերանց աղջ-
կերքը... «նրանց» ձեր թուրքի ընկերնին են
փախցրել. հմի գեա պէտք ա գնաք գիտնէք-
քիրէք, զեա թէ չէ էքուց ձեր էրկսիդ
բէշնիէն (վճիռը) կտամ, տանով տեղով
կըկորցնեմ...»

— Մենք լինչ դապի ունենք զրանց աղջ-

կերանց հետ—խօսքը կարեց Վաղօն-տարել
են տարել, մեղ ի՞նչ...

«Ոնց թէ մեղ ի՞նչ... Զեր նշանածներն
են, բա ով պէտք ա մանդա:»—Պատասխա-
նեց ունքերը խէթմէթատիլով Քօխվէն:

—Զէ. մերը չեն, քու տղինն են, դու
պէտք ա գնաս գանես:

«Զերը չեն... Բա էս մարթամիջով
և շանդրէքն ի՞նչ էր:»

—Հմի, դուք խօսք էք տալիս-ասեց
Վարթանը, որ «Նրանք մերն են:»

«Տօ, դուռակ (ախմախ), բա ուժն են»...
—Քօխվա, բերանդ իստակ պահի... թէ
չէ մի օր էդ ոսերէն դուռակ խօսքը փորբմդ
կթողնեմ, հա... Ես լաւ հայ եմ, լաւ իմացի...»

«Բա ընչի ես նշանիցդ եղ կաղնը՝ մ...»
—Մենք եղ չենք կաղնըմ, դու ես մեզ
գոռով եղ—

«Բաս, որ եղ չես կաղնըմ, —խօսքը կըտ-
րեց Քօխվէն—գնացէք էս սհաթին ձեր
նշանածներին բերելու:»

—Էս սհաթին, մենք կզնանք, կդթնենք,
—նրանից ետոյ, էս խօսքը մի օր միտպ
բեր քօխվա, տեղն ընկած վախտը կը-
մեռն ենք-էլ, թէ որ դու նոր մէկամնց
մեր մէջն էլի խառ...»

Քօխվէն Վաղօի խօսքը էն սհաթը կտրեց:

որ խալխի միջին իր կեխտը չբացվի: «Դէ
թէզ արէք, գնացէք: Աղջկերանցը մի վաս
չհամնի...—ասեց ու տղերանցը բօթբօթիլով
տանիցը դուրս տարաւ հետը: Տղերքը գզագ-
վածի պէս ճամբա ընկան:

Հմի մենք սրանց թողալով, գնանք տես-
նենք թէ աղջկերքն ուր են:

¶.

Իրենց մօր հրամանը կատարելով Անուշն
ու Շուշանը կժերն ուսեցին ու իրար հետ խօ-
սելով գնացին դպա քօռ աղբը վրա: Էս էն
ժամանակն էր, եբոր «Նը անց» նշանածները
Գանելեանց գոմըմը փոնկած՝ ին, համանրանց
գոմը քցիլը անիրաւ Քօխվէն էնպէս էր արել,
որ ոչ ով չէր խմացել: Խեղճ աղջկերքն-էլ էն-
հէնց գիտէին, թէ իրանց նշանածները դա-
շտղների բալագանըմը իրանց են մնըմ:

«Ախչի--Շուշան, էս լաւ սիրու ա, չէ.
հմի մեղ ու մեղ մեր գլուխը պէտք ա անօ-
րէն թուրքերին տանք...»

—Ի՞նչ ա որ, վախըմ ես, խօսքը կտրեց
Շուշանը, եբոր մեր նշանածներն էնտեղ են,
էլ թուրքերը մեղ ի՞նչ պէտք ա անեն...

Ա՛խ... բա ի՞նչի չեն գալիս տանըմ—
խօսեց Անուշը, որ մի թէզ գնտնք «Նրանց»
մօտ...

— Հը՞ . էլի մի քիչ ուշ տեսար սիրակ
կրակ ընկած...

«Ախչի, քուս սիրառ բարա... էրնակ քեզ...

Աղջկերքը սուս կացան: Խաշամկուտ մութ
ծառերի տակից էրկու ձիւսորներ գուտ եկան:
Աղջկերքը տուաջ սփարթնեղին թուրքերի
պատկերիցը, համա յետոյ սիրտ առան:
Թուրքերն իրանց թարքներին (գաւակներին)
նստացըինու աղջկերքը աչքերը խուփ արած,
էլ-չիմացան թէ ուր են գընմ... Աչքերն մնէլ
էնտեղ բաց արին, երոր ձիանը կտղնեցին ու
իրանց վէրբերին... Օհ... Աստօծ! Ետրաք ոնց
պատմեմ էն սհաթը, երոր աղջկերանցը սուս
ու փուս տարան մեր առաջին ասած բալա-
գանը... Խեղճերը մի թէ զ դէս ու դէն
մտիկ տվին, միայն «նըանց» չտեսան ու
քարտացած մնացին: Թուրքերից միայն չորս
հոգի ՚ին տանը մնացել, մէկէլները գնացել
՚ին գողութէնի: Բալագանի չաղ կրակի լիսը
էնհէսց թէժ էր, որ պատերի քաշ էլած չոր
խոտերն-էլ տեսնվըմ ՚ին թուրքերը ըսփնին
մի թիզ բաց արած, պելացած մնացին, երոր
տեսան իրանց տուաջին էս էրկու աննման
հրեշտակներին... Մին-մի երեսի մտիկ տա-
լով կասես թէ ուզըմ ՚ին աչքով ունքով
իրանց բախտաւորութիւնը շնորհաւորեն...

Սնուշը, իրանց գէզըմ թուրքերի հետ

ծանօթութիւն ունենալով, նրանց լիպուն ու
ափալլաւ գիտէր: Մեզ էստեղքերել ավողնե-
րըն ուր են»-հարցը եցնա ունքերը վրատալով:

— Հոգի ջան, -կմկմալէ պատասխան
տվեց թուրքերից մինը:

«Օրուջ, ձէնդ կտրի, վրաբերեց մի ու-
րիշը՝ տեսնելով, որ Օրուջի պոօշներիցը
կրակ ա թափըմ...

«Բայրամ, տեսանը, որ ասըմ էի... Հմի-
էլ-ձէն կտրելու վախտն ամ...»

Աղջկերքը մատները կծեցին:

«Թառլան—խանըմ... շարունակից Օ-
րուջը ձեր բերի ավողը մեր գլխաւորն ա»:

— Ի՞նչ բղավեցին աղջկերքը-ով ա ձեր
գլխաւորը, վարթանն ու Վաղօն...

«Ախ, թառլան ջան, կանչեց հոգոց քա-
շելով բալագանի մէջի չորս հոգուց մինը:

— Ասածն չիմացմաք-հարցը եց բարկացած
Անուշը. Ո՞վ ա ձեր մէծը, թուրք ա թէ հայ...

«Մեր մեծը թուրք ա...

— Թուրք... բղավեցին խեղճերը մին-
մինի ձառվ ընկնելով, էնհէնց կպան մին-
մինից, որ կասիր թէ մի հոգի մի մարմին
դառան... Արինն աչքերը կոխած անօրէնի
հմար կուզես նղավի, կուզես թէփոխին տու,

նա իր ասածը կանի:

«Ի՞նչ էք վախրմ, խանըմ ջան, - վեր-

ջապէս մօտ գնալով խօսեց Օրուջը — թէ որ
դուք էստեղ անսաս կմնաք, ձեզ ոչ ով էս-
տեղ միաս չի տալ...»

Աղջկերքը, էս գաղտնի խօսքը լսելով, եղեղ
քաշվեցինու ձէն-ծպտունը փորնին քցեցին:

— Դուք, շարունակեց Օրուջը — թէ որ
մեր կամքը կկատարէք՝ լաւ կապրէք էս-
տեղ ու... Այի տեսէք ինչքան դովլաթ ու-
նենք, դիֆ ձեզ կլի... Էս խօսքըմը դպա
աղջկերանցը մօտացրեց փողի պարկը:

«Կորի, կորի անօրէն, բղավեցին աղջ-
կերքը մին մից բաժանվելով ու թուրքի
դօշին բօթելով:

— Այի! տեսէք ուրիշ ինչքան փող, մալ,
դովլաթ...

«Կորի, կորի ասելով «նրանք» դուս
վազեցին քամու պէս: Տանը մնաց միայն
իր ընկերների արարմունքի վրա քարացած
Բայրամը, մէկէլ երեք ընկերները լաւ հա-
մարեցին մթնըմը աղջկերանց հետ խօսալն
ու եղնէն դուս վազեցին: Աղջկերքը մթնի
մէջ մի ծառի քօքից կպան ու, մին-մի
փթաթված, շնչները փորը քցեցին...

Մէրի կրակով էրված, անխիղճ Օրուջը
մէկէների հետ դէս ու դէն ընկաւ, ման
եկաւ, վերջապէս չորուքթաթ անելով փէտա-
ցած աղջկերանցը գտաւ... Ել վախտ չկորցնե-

լով ուզեց կշներին նամելու մի քիչ խօսալ-
համա, հէնց որ փէտացած աղջկերանց քնթովն
ընկաւ մուռատառ թուրքի շորի հոտը, կասես
թէ յարութիւն առան ու «Վարթան, Վաղօ»
բղավելով ուզեցին երկինք վերանան...

— Այի, շաշ հայի աղջկերք...

«Զէնդ կտրի մուռատառ շուն, բղավեցին
աղջկերքը. դու ինչ ես, որ Հայի վրա բերան-
բաց անես... մնաչըմ ես Վարթանին...»

«Ի՞նչ էք խօսըմ, նրանցից էլ ձեզ օգուտ
չկա, նրանք ձեզ մեր ձեռքն են քցել... Դուք
հմի մերն էք...

«Ի՞նչ... Նրանք... Մենք ձերն ենք...»
Աղջկերքն էս վերջին խօսքերից յետոյ էլ ինչի
պէտք ասպասէին, եբոր աշկարա տեսան
իրանց վերջին օրը:

Ախչի, խէլքնիդ հվաքեցէք, խօսքս լաւ
իմացէք...

«Կորի, կորի, մուռատառ, ձեռդ քաշի մե-
զանից... Խելքիցդ հանի էդ բանը... ասեցին
աղջկերքն ու մի ուժով թուրքին եղ քցեցին
իրանցից: Մէկէլ թուրքերը ձէն չին հանըմ.
մտիկ ին անըմ թէ վերջը ի՞նչ պէտք արի:

Օրուջը, հէնց որ տեսաւ աղաչանքով ոչինչ
չի ըլըմ, էն սհաթը իր կէռ սուրը դուս քա-
շեց ու աղջկերանց դօշին մօտեցրեց: «Այի,

Ճեր վերջը մօտեցել ա. գեա հա, գեան չէ...
ինչ էք ասըմ...

— Չէ, գոռացին աղջկերքը: Մենք քեզ
պէս մուստառ շան խօսքը լսենք... Հայի
աղջիկը թուրքի ձեռին...

«Բաս էդհէնց» գոռաց Օրուջը:

— Էդհէնց, մուստառ շուն...

«Ախր ի՞նչով եմ մուստառ» էլի սկսեց
քաղցրութէնով Օրուջը, ես, որ հայերէն եմ
խօսըմ, հայ չեմ. Ասած վկա հայ եմ՝ հայ,
միայն ինձ ողորմացէք...

— Կորի, այի շուն, մեզք ա հայի սուրփ
անունը, որ գու յիշում էս. աղջկերքը բղա-
վելով վերկացան, կորի, թէ չէ սուրդ առաջ
քու փորը կմանի...

«Աղջկերք, մեզք էք, եկէք գնանք բա-
լագանը...» էս խօսքն ասելով Օրուջն ուզեց
նրանց մօտենալ: Աղջկերքն էլի մի բարձր
«Վարթան, Վաղօ» բղավելով վագեցին դպա
ներքե... Թուրքերն էլ չսպասեցին, ուզեցին
քոնեն...

Աղջկերքը, ոչի պէս էլ սար, քոլ չհարցըին,
վագեցին, խէլիմ թուրքերից հեռու կաղնեցին:

Նրանց առաջին, մթնի մէջը, խոր ձորըմ,
քարախի տակին, վշշըմ էր գեաը փլրփըրմ
շղաղված: Աչքդ գեաին քցէիր, դժոխքից
աւելի ուրիշ ոչինչ չէր տեսնվիլ:

Ոտի թմիթմիոցը մօտացաւ:
«Անուշ, գալիս են, տեսնըմ ես առաջ-
ներիո անդունդը»:

— Շուշան, էլ կանգնիլն օգուտ չի, գե-
րեզմանն ստներիս տակին ա, Աստօծ մեր ճը-
կատին էս էր գրել. հալրաթ մենք պէտք ա
«կոյս» ՚ինք մեռել: Սիրտդ պնդացրու, երե-
սիդ խաչ քաշիր, սուրբ Շուշանին յիշիր,
մի յիշատակ թողնենք, որ մեր մեռներով
սաղ աշխարքն իմանա, թէ Հայի աղջիկն
իրան պատվի հմար՝ կմեռնի ու իր գլուխն
անօրէնին չի մատնիլ...

«Անուշ ջան, գու-էլ խաչ քաշի, շները
մօտենըմ են, գու-էլ յիշիր մեր անբաղդ Վար-
թանին ու Վաղօին... Թէ գրուստնրանք մեր
հօր լաջու էնքան քարացան, որ մեզ էստեղը
քցեցին... Ա՛խ լիզուս չի զօրըմ...»

— Նրանց վրա էդհէնց բան մի տսիլ,
Շուշան ջան. նրանց քոլ կլի մեր մահը...

«Անուշ, մօտեցան...

— Շուշան արի մենք էլ մին-մի պա-
շննք... Ով սուրփ Աստօծածին, առ մեր
հոգին... «Մնաք բարով հանդեր, դաշտեր,
հէր, մէր, քիր, ախրէր, Վարթան, Վաղօ...»

Ոտի ձէնը աւելի ու աւելի մօտեցաւ:
Էս վախտը Անտակ—ձորը դրմբրմբաց:

Վշշաց ու մի աչքաճպիլըմը ձորի տակին
Թրմփալէ մի ինչ որ զըխկաց...
Աղջկերքն էլ չկային:

¶.

Էնպէս էր ձէն ու ձունը կտրվել, լովել
որ քշերվան քամու պղպղան էր հեռու
Միայն մեր ասած բալագանըմը մի ինչ որ
խօսոց էր լսվըմ:

«Բայրամ, էս բան էր, որ մեր զլուխը
Քերեց Օրուջը: Հմի ի՞նչ պէտք ա անհնք,
գեա Ալուն, գեա էն ասլան հայերին ի՞նչ
ջուղտք պէտք ա տանք»:

— Տօ, լիզուդ հմի բան ընկալ: Ես որ
ասըմ էի Օրուջի ձէնը կտրել տանք, դու
ասըմ 'իր «չէ, թող բաւքի ոէի (մաքի) գան,
կարելի ա մենք էլ մի բան ճանգինք»: Աիր,
աղբէր, էդ հայերին նոր էք ճնաշըմ: Դրանց
մեծն էլ, պուճուրն էլ ասլանի սիրու ունին:
Հմի, ով ա գիտըմ աղջկերքն Օրուջին յաղ-
թէն էլ, նրանք սկի ոէի կգան: Օմար, դու
անմեղ ես նստըմ, վեր, գնա նրանց ձէն
տուր, աղջկերանցն էլ խափի, ասա մենք
ուզըմ 'ինք էդհէնցով իմանանք, թէ դրուստ
սիրըմ էք ձեր Աղզը, ձեր նշանածը թէ
չէ... վեր, թէդ կանչի...

Զհէլ թուրքը տանիցը դուս գնաց:
Էս հաղաղըմը դուռը բացվեց: Տուն
մտան էրեկվանից գնացած ոչխար գողանալու
հմար ընկերները: Բայրամն ամեն բան նրանց
պատմեց: Թուրքերի մազերը գլխներին բիղ-
բիզ էլան:

«Վայ ձեր տունը չքանդվի. էդ ի՞նչ էք
արել... աղջկերքը կորած պէտք ա ը՛լեն—
ասեցին-հմի պէտք ա գան մեզ կրակոց
տան... Բայրամ, հրէս կասես էլի եկող ըլի.
ոտի ձէն ա լսվըմ...»

— Սուս կացէք, տեսնենք ո՞վ ա...

Էլի դուռը լացվեց ու ալախ-ալախ, քափ
ու քրտնքըմ մտած տուն մտան էրկու հոգին
Թուրքերը սիարթնեցին, դողդողոցն ընկան...

«Ո՞ւր են, տղերք, բերիք...» հարցըին
եկողները:

— Վարթան ջան, զլիսիդ դուրբան... բե-
րինք: Էս տսելուց յետոյ Բայրամն էլ չկա-
րաց խօսի: Լիզուն կապվեց:

«Միայն-վրաբերեց թուրքերից մին-տա-
նիցը դուս են գնացել, գիտենք ոչ հւը են...»

Վարթանը սրտի եռսիցը դողոցն ընկաւ,

— Ի՞նչ ես խօսըմ—Թարման-բէգ, —
հարցըեց Վարթանի կշախ կաղնողլնրանք
տանիցը չեն դուս գնալ իրան օրըմը. չեն-

Էլ առանց մահանի հեռանալ: Ո՞րտեղ են,
կրուստ ասեցէք...

«Աստօծ վկա, Վազօ ջան, տանիցը
քաշվել են...»

— Բա «նրանց» «Վարթան ու Վազօ»
բղավոցը մենք չիմացանք, — ասեց Վարթանը, թէզ ասեցէք, ուր են...

«Վալլահ, Վարթան ջան, փախել են...»

— Վարթան, էլ ի՞նչ ենք կաղնըմ,
գնանք, կարելի ա ի՞նչ պատճառով են հեռացել... թէ պատճառը կիմանամ, վրաբերեց Վարթանը «Ետոյ էն վախտը սուր ու
թուր կրթափեմ սրանց գլխին... Գնանք...»

Շէմքիցը հէնց որ սուր դուս գրին մեր
տղերքը, գնացին ու կրակվածի պէս էլ քոր
ու քօլ, դաշտ ու թումբ չասեցին, ման եկան
ձէն ածելով, «Շուշան, Անուշ» բղավիլով:
Զէն-ծպտուն չկար...

Վարթանի յետկից պօչը կեռացրած՝ ծառերի տակին հուփ ու կուչ գալով, հոտ քաշկով ման էր գալիս «Բանակ»*) շունը: Էն շունը, որ Շուշանին շատ վաղուցըմ

*) Շատ տեղեր Հայերը իրանց շնորի անունը
ուրիշ ազգի խօսքեր դնըմ, միայն աղքասէր Վարդանը իր
շան անունը «Բանակ» էր զրել. էս խօսքը հայերէն ա ու
նշանակըմ ա օրդու՛անակ, հալբաթ նըտ համար, որ շունն
ոչխարներին հաւաքելով Բանակ ա կազմըմ ու չի թողնըմ,
որ շալ ընցնեն:

կապած տեղը պոօշնին լպստորիլով քնացնըմ
էր, գեա նստած փուփ ուտելիս հետը ու-
տում, հետը թաթաղաղ էր տալիս... Էլ ի՞նչ
ասել կուզէր, որ հմի էս շունը իր կորած
տիրուհուն էր պարտըմ...

«Բանակ *), հաս, հաս... բղավըմ էր
Վարթանը, հաս: զթիր Շուշանը...

Շունը անձէն, անձուն էստեղ, էնտեղ
էր թոշըմ...

Երկար մեր տղերքը պտըտեցին ու ոչինչ
չգթան...

Վարթանը քրտնամխած, թուրքերի վրա
կատաղած, ուզըմ էր թողա, զնա թուրքերի
հրսանիքը նստացնի: Միայն Վազօն թողըմ
չէր, — կարելի ա-ասորմ էր թուրքերը մեղ
չունենան, աղջկերըն ըլեն ահու փա-
խած...

Վարթանն էլ շատ չկարաց համբերի,
շվացրեց, որ շունն եղ գա. «Բանակ հաս» —
բղավեց, միայն Բանակը չկար, չէր երելը...

*) Էս խօսքերից մենք շատ ունենք: Հայ-մարդն իրան
շան անունը փոխանակ Ռոդկա, Մուրա, Շարիի, Բարբոս,
Ղայթար, և այլն զնելու, կարող ա զնի Առեկը Առկուլ,
Առտար, Անահ, Արթուն, Բանակ, Բարի, Բ'նկեր, Լիտոն,
Շակաչ, Կեռպոչ, Հնատառ, Համկիչ, Նախանձ, Սրտօք, Վաղ-
հաս, Տիրասուէր, Ջնինիկ, Հասքեր, Հասկուլ, Հասվազ, և այլ:
Էս անուններն ասըլ Հայերէն են ու շատ էլ զնոշ: Որ շան
վրա զնես ասլան կդառնան...

Անջաղ-անջաղ Բանակի ձէնը լսվեց...

Տղերանց ոտի տակին խոր ձորիցը շան
ձէնը երեք օրական երեխի ձէնի պէս դուս
էր գալիս. միայն թէ էլի շուն իր շնութիւնն
անըմ էր, իրան ուտըմ, կտրատըմ էր... Ա՛խ,
շան պէս հաւատարիմ երաբ ի՞նչ կա...

«Վարթան ջան, իստակ շունը բան ա
տեսել, էնդուր չի գալիս. գեա «նրանց»
ա դտել, գեա թուրքերին...»

—Վաղօ, բաս որ էդհէնց ա գնանք...
թէզ...

Տղերը շան ձէնի վրա առաջ գնացին:
Շունը, էնց որ տեսաւ իր տիրունչը, աչքա-
ճակիլմը դուս թուաւէնտեղից ու էլեղ, բարձր
կալանչելով, մեծ եառլզանի գլխովը, իրան
ցած քցեց ձորը... Շան զրխկոցը երկար
ժամանակից յետոյ լսվեց ձորի տակին:

«Վարթան, շունն ուրախութէնից իրան
մատաղ արաւ «նրանց»... Գնանք ձորը...,
Տղերը, շան գտնելու հմար, ձորը ցած գնա-
ցին: Մութն ակնակիր էր: Վաղօի ոտներովը
մի ինչ որ ձորի տակին փափուկ բան ընկաւ:
—Վարթան, կաց, դտան...»
—Ո՞ւմ. Շանը...

«Արի, տես...

Տղերը շփշփեցին: Օ՞հ, Աստօծ, ի՞նչ էր
նրանց հալը... Նրանք արդէն զգացին որ

իրենց սիրահարներն ընկած ու շուտով չախ-
մախի տալով Վաղօն բղավեց—Անուշ ջան...
Ձէն չկար. էս ի՞նչ եմ տեսնըմ...

Վարթանը դէս ու դէն ընկաւ, որ իմա-
նա կըշտներին թուրքեր կան... Միայն քիչ
հեռացաւ թէ չէ նա-էլ չախմախի տալով
բղավեց Շուշան ջան...

Վարթան, Շուշանն էլ...

Լըվլիկը, սուգ-շիվանը ձորը դըմբե-
ցնըմ էր...

Էրնակ լիզուս չորացել էր, քան էս
մասին մի բան ՚ի ասել: Տղերը երկար
վախտ ձորը կանգնած Տէր-Աստօծ, ի՞նչ
իրանց ՚ին անըմ, կատաղած մարդն էլ չէր
անիլ... Էրկու մեռած աղջկերը հողի վրա
խաչված, տղերքն-էլ արին արտասունքն
աչքները կոխած, ձեռքերը ծոցըմը դրած
սար ու ձորին ՚ին լացացնըմ... Մութը փա-
րատիկ էք: Տիսւր լուսինը երկնքի կէս
տեղըմը կրակի պէս հուրհրատին, շողշողին
էր տալիս, աշխարքը լուսաւորըմ...

«Վարթան, էլ ինչ ենք կաղնըմ, վախ-
տը չի, որ «սրանց» կողքին-էլ էրկու ջիվան,
սէրի կրտկովն էրված, տղերք պառկէն...

— Ի՞նչ ենք շաշի պէս էսքան լաց ըլլմ.
Ծնչի շաշի պէս մենք էլ մեր զլուխն սպա-
նենք, մինչի «սրանց» էստեղը քցողին էս օրին

չհասցնենք... ԶԵ, մինչի «սրանց» էսհէնց անողի արինը չխմեմ, ես հալ ու սհալ գլուխս դեսնին չեմ դնիլ... Հմի էլ կասեաթէ «թուրքերն արդար են...

«Միտդ ա վարթան ջան, Շուշանի էս խօսքը, թէ «Մեզ մեռած կդանէք թուրքերի ձեռըմը, դէ որ դուք էնտեղ չէք լիլ...

—Վայ, հոգիդ ուտեմ, նամուսով Շուշան ջան, դիակներից մինի վրա ընկնելով մխկալմ էր Վարթանը—մգեար դու սուրբ՝իր, մգեար դու մարգարէ՝իր... Հայի անունիդ կեխտ չկպցնելու ու սէրիդ հետ կեխտ չխառնելու հմար էլի Վարթանիդ հմար սուրփ մարմին, սուրբ սէր, սուրփ անուն ես պահել, որ գրանցով էրվի փթօթվի քու խեղճ սիրականը... Մեռնեմ քու ջարթված, կապտած երեսիդ... Կարթացող, ես էստեղ էրկու սհաթէ էլ խօսք չեմ կարող դուրս թողալ, հմի խօսալու իրաւունքը քունն ա, ասենք, թէ առաջիդ դրած ըլեն էրկու սիրեկանի անմեղ մարմին ու նրանց կշտին էլ իրանց սիրեկանները կաղնած, ի՞նչ կեդ վախտը նրանց հալը...

«Վարթան, էլ լաց ըլիլու վախտը չիւ աշկարա երկում են մեր թշնամիքը, նրանց

իրանց պատվին հասցնիլ ա հարկաւոր» ասըմ էր Վաղօն:

—Բա սրանց մնց թողանք...

«Դրանց» յաւիտենական մէրը (հողը) իրանց կանչըմ ա, Աստօծ մեր ճկատին հալքալթ էսհէնց էր զրել. որ մեր կոտրած ձեռովկը մեր սիրականներին աչքաբաց հողի հետ պսակենք... Դէ, ժամանակն անմեղ չպէտք ակորցնենք: Դու կաց, ես էրկու բնիր շինեմ...

—Վայ. Վաղօ ջան... էդ ի՞նչ ես ասըմ...

«Էլ նոր խօսալու վախտը չի», էս խօսքերի վրա Վաղօն հեռացաւ ու իր սուր դամովկը էրկու բնիր շինելուց ետոյ՝ էլի եկաւ: «Էս մի բնիրն էլ դու առ, Վարթան ջան»:

—Բարանա սիրադ, Վաղօ... էդ ի՞նչ ես ասըմ...

«Տօ մարդ Աստծու, ի՞նչ էլաւքեզ, հինգ սհաթ ա լաց ենք ըլլը, լաց ըլիլով մարդ կը սաղանա, գեա դուշմանիցն արին կառնվի...»

Էս խօսքերը Վարթանին քարացրին ու մի քիչ վախտից յետու արդէն արտասունքը հողին թաց անելով էրկու խոր փոս ՚ին հազրել: Ո՞նց ՚ին հազրել կարդացող, դնւ իմացի ՚ի հարկ է, սիրեկանն աչքը բաց իր սիրեկանի հմար փոս փորիլը հեշտ բան չի»...

Էրկու փոս բերանը բաց հազիր ՚ին, աըզերքը երկար կանդնած մտիկ ՚ին անըմ լաց

ըլիլով։ Հմի պէտք ա վեր ունեն՝ իրանց ձեւ ուղղ իրանց սիրեկաններին հողին տային։ Եադն իր տեղովս, եթ որ անցկենալիս տեսնը ա մի մեռել թաղելիս, էլ ի՞նչ ասել կուզի, որ թէ աչքը թաց չի անըմ, գոնէ, մի ախ էլա քսաշըմ ա. սրանք խու իրանց սրաների կտորներին, իրանց սրտի սիրելիներին պէտք ա թաղէին։ Դէ, հմի արի ու լացր պահի!...

«Վարթան ջան, ուշքդ հվաքի, մենք թշնամու տէր ենք։ Հէր օինած, իդիթութիւնդ մտքիցդ քցեցիր։ Բանն էն չի, թէ լաց ըլենք բանն էն ա, որ սրանց սպանողների արինն առնենք ու էն վախտը դինջանանք, գեա թէ չէ, գնանք երկինք, որ էնտեղ, հմի սրանք մեզ սպասըմ կլեն, գնանք, տեսնենք, որ էնտեղ գոնէ մեր սրտի փափագն առնենք!...»

Էս խօսքերը Վարթանին ասլան շինեցին. Նա էլ չէր ուղըմ երկար կանգնի, ուղըմ էր, թէզ իր թշնամու ձեռովս, ինքն էլ երկինք գնա ու Վաղօի ասածի պէս, իր սէրն երկնքըմը վայելի։

— Վաղօ, բաս կտղնիլ մի, թէզ... էս խօսքից յետոց էրկոսով սիրեկաններին փոսերի կուշտը բերին։ Վաղօի պէս սառնասիրտ տղէն էլ էս նմուտում սիրտը տղի ծով շինեց. միայն կակող սրտի տէր Վարթանի աչքին հմի սիրականը մահ էր երկըմ!..

«Վաղօ, թէզ արա, ինձ դնամիշ ես անըմ, գու լաց ես ըլլըմ...»

— Զէ, չէ, Վարթան, կաց. պաշիլով էլա սրաներիս փափագն առնենք։ Տղերքը կրտկվածի պէս սիրեկանների էլ-աչք ու ունըը, էլ-ձեռն ու ոտը չին ասըմ պաշըմ ին, արտասունքով թաց անըմ մին, հինգ, տասը, հարիր, հաղար հետ...

«Վաղօ, դէ, թող անդրանիկն Անուշն ա, առող Անուշին հողին պահ տանք»:

Զէ, չէ, Վանթան ջան, կաց միքիչ-էլ մտիկ անեմ...

Վարթանը դօրթ ա չէր ուղըմ աչքը հեռացնի Շուշանիցը, միայն չէր-էլ ուղըմ սիրտը պուճուր երեխի պէս դառնա։ Վաղօն, կասես թէ փափագն առել էր շատ պաշալչելուցը, մօտեցաւ Վարթանին. «Դէ Վարթան ջան, ասեց-հմի վախտն ա...»

— Զէ, Վաղօ ջան, թող միքիչ-էլ ես մտիկ տամ։ Վաղօն երեսն-էլի իր սիրեկանի վրա արեց ու սկսեց պաշալչել... Հմի Վարթանը սկսեց «Վաղօ ջան դէ թէզ, բոլ էր...»

— Միքիչ էլ կաց, Վարթան ջան...

էն... կարթացնդ, ես հաւատամ, որ գու պատահաս չես քու ազիզ բարեկամի թաղիլուն. միայն անխիղճ տէր-Մարկոսն ՚ի հարկ է քեզ թէ, որ զօռով եդ չքցէր սիրելուցդ,

դու սկի չէիր ուզիլ նրանցից հեռանաս. էստեղ խու ոչ-Մարկոս կար, ոչ-էլ քարասիրտ խալիս: Սիրեկաններին չորս կողմից կանգնած մտիկ էին տալիս միայն անլեզու սարու ձորը, քարը ու քօլը... Լուսինն էր, թէկուզ աչքով, ունքով անէր երկնքիցը, աղերքը լոնչ կտեսնին. աչքներն առաջներին ինքել, չունքի լուսինը գլխի վերևն էր, սրտի սիրելին գետնի վրա... Միայն, ափառս, խօսքով էլա տղերանցն աչքիցս քցեցի. մնէլ էն-էլ տեսայ, որ հմի նրանք կանգնած են էր կութմբի կշաբ,

«Մնաս բարով, Անուշ...

— Մնաս բարով, Շուշան:

«Երկուսդ էլ մնաք բարով»:

— Երկուսդ-էլ մնաք բարով:

«Մենք ձեզ երկնքըմ կտեսնենք», կարճ վախտից յետոյ վրաբերեց Վարթանը.

«Միայն էլի չենք մոռանալ Զեր սուրբ գերեզմանը»:

Քանի որ խմած կլինենք թուրքերի արինը...

«Մնաք բարով...»

— Միայն մինչի էքուց—ասեց Վաղօն:

Էստեղ ես լիզուս փորս եմ քցըմ, տաղ եմ անըմ, էլ ոչինչ չգիտեմ. միայն էս եմ ասըմ, որ խեղճերը հեռացան».

Տղերքը Բանակին-էլ չդժոնելուց յետոյ՝ գնացին իրանց չոքան ընկերներին բանը յայտնեցին ու, հայի պատիւր չկորցնելու հմար, էքսի օրը թափկեցին Բաղադանի վրա, կոտորեցին, ջարթեցին, մի խօսքով, քարառուն թուրքի մահի փայ արին...

Վարթանի հմար էլ ասել չէր ուզիլ, թէ ի՞նչ էր անըմ. «Այի դուք տնօրէն, անաղուհաց քրդեր, դուք հլա հային մի աչքով էք մտիր անըմ», ասըմ էր Վարթանն ու թուրքի գլխին սոխի գլխի պէս թողնըն...

«Սպանեցէք, ջարդեցէք»—բղավըմ՝ին չոքան հայերը, «բալագանը քար ու քանդարէք... Հայի աջկանը չոռ ասողներին չոռ տվէք, սպանողներին մտհ... Թող աշխարհն իմանա, որ հայը իր պատվի հմար կեանքը մատաղ կտա ու թշնամուցը մահը մահով կառնի..»

«Ջարթեցէք, փշրեցէք»—բղավըմ՝ին մէկէները սուր ու թուր թուրքերին, Հայի դուշմանին, մեր կրօնի, հաւատի թշնամուն!.. Զնջեցէք դրանց քօքը, որ իմացվի, թէ հարշատ կհամբերի, համա մի անդամ մուռը կհանի...»

«Զնջեցէք էդ աւազակիների հոտը մեր երկրիցը, գոռըմ՝ին մէկսէները»; գրանց ձեռիցն են հայերը իրանց երկիրը թողել. ուրիշ

երկիր գնացել. դրանք որ չլին՝ հայերն էլլ
կդան իրանց օխնած երկիրը...»

Էսպէս, տղերքն ամեն բան քար ու
քանդ անելուց ետոյ, բալագանի կշտին
թաղած թուրքերին էլ հանեցին իրանց գո-
ռիցը ու մնացած թուրքերին էլ հանեցին
իրանց գոռիցը ու մնացած թուրքերին էլ
խոկեցին Անտակ-ձորիցը. ետոյ բալագանը՝
էլած չէլածն էլ հվաքեցին, գնացին Շ...Շգէղը
բանն իմաց տալու հմար. Միայն Վարթանն
ու Վաղօն ոչինչ չվերկալան, բացի ոխից:
Նրանք էլի երկար էս ձորիցը չէին հեռանը,
չունքի՝ իրանց գան ձն էստեղ էր ու ամեն
թուրք որսալուց յետոյ իրիկու, առաւօտ
գալիս՝ ին էր կու թմբի կուշտ. էնտեղ
ծունը դնըմ, աղօթք անըմ, թմբները պաշըմ
ու էլի հեռանը... Ո՞նց՝ ին հեռանը. էդ
գիտեմ ոչ, միայն նրանց գնալու վախտին
սար ու քոլ դրմբըմ էր ու ականջ դնողն
էս խաղն էր լսըմ.

Խը ձորի մէջ, էրկու սիրական
Մնըմ են ընկած անտէր—տիրական

«Կացէք, ձեզ մատադ,

Անուշ ու Շուշնին,»

— Ծառեր, դուք էլէք

Սրանց պահապան...

Երկու թմբի մէջ դեռ սէր ա մլըմ,
Երկու ջիվանի ուշը—միտը խլըմ,

«Մի կրակն Անուշն ա,
Մինը խեղճ Շուշնին:»
— Ծառեր դուք էլէք
Սրանց պահապան...

Բերինք սուգ. շիվան: Առանք սէրներս:
Գնըմ ենք. . . Միտին մնաց աչքներս. . .
«Եարաք կհովանանին:»
Զէ... Զէ... Սարեր ջան,
— Ծառեր, դուք կլէք
Նրանց պահապանն.ն.ն...

Պահ

Էսէնցով անց էր կացել երեք օր: Օրը
մթնել էր: Անտակ-ձորը բուերի ու բայ-
դուշների մեռելու ձէնիցը սգըմ էր: Երկու
թմբի կշտին, հեռու ծառերի շվաքի տակին,
աղվէսի պէս մարադ մտած մի քանի թուր-
քեր, եարադաւորված: մնըմ՝ ին:

Ղայթար,— ասըմ էր մինը—հրէս, որ-
տեղ որ ա, կգան... թվանքները վիրի ոտըմը
պահեցէք...

— Զէ, Բողար, լաւ կլի, որ սաղ-սաղ
փոնենք ու էնհէնց չարչարենք...
Ետոյ գիտես, ասլանի ձուտեր են,
էրկսով...
— Ի՞նչ... էսքան հողուս կարմն յաղթել...

«Սուսէք, հրէն գալիս են»— ասեց նը.
բանցից մինը:

Էս հաղաղումը էրկու տղա; թվանքներն
ուսին, գալիս 'ին գպա երկու թուրքը: Հէնց
որ եկան էն սհաթին թվանքները վէր դրին,
փափախները վեր կալան ու չոքած սկսեցին
թմրերի վրա արտասունք թափել... Մութը
պատել էր. միայն լուսինը, երեմ էր, որ
միքիչ վախակից յետոյ դուս պէտք ա դա...
տղերքն իրանց նշանածների գերեզմանի
վրա ընկած էլ չորս կողմը չէին մտիկ անըմ...

Սար ու ձոր լովել էր: Անկարծ ծառե-
րի քամակից թուրքերի մի խումբ վրա
տվին էս էրկու տղերանցը...

«Վարթան, թվանքդ վերկալ,—բղավեց
մինը:

— «Վաղօ: զօչաղ կաց, — պատասխանեց
Վարթանը:

Հայի անունը չկոտրենք—մահ գհա
կեանք. Էս խօսքերի վրա տղերքը գիծ յէրնջի
պէս մօտեցող թուրքերին մին-մնի ճառվ
տվին ու թվանքներն առած դայիմ ձէն տվին
իրանց չոբան ընկերներին... թուրքերն էլ
չկանգնեցին: Վարթանի ու Վաղօի երեք
հետ քցած թվանքովը հինգ մարդ վէր ըն-
կան արնակոլօր. Միայն էլ գիւլա բարօթ
չկար. թվանքների կոթիցը փունած թուրքերի

հետ խառնվեցին ու ասլանի պէս սկսեցին
ջարդ տալ... Թուրքերը դէս ու գէն ընկան,
միայն, էլ հնար չգտնելով, մտան քոլի մէջն
ու էնտեղից քարապը աւ պատան ու կ արին. չուն-
քի նրանցից մի քանիւը թվանքը չունէին,
մէկէների թվանքն էլ տղերքը խլել դէս ու
դէն 'ին շպոտել... Վարթանի ջանըն ջան
չէր մնացել էնքան ձեռն էր վրա բերել սրա,
նրա երեսին, զլխին... Վաղօի հմար էլ ասիւ
չէր ուզիլ...

Տղերքն էլի եռվլմ ՚ին: Քօլի միջիցն
եկող քարերից մինը մթնի մէջ դիպաւ Վար-
թանի գօշին... Խեղճ Վարթանը վէր ընկաւ
իր նշանածի գերեզմանի վրա... Վաղօն, աես-
նելով Վարթանի վէր ընկնիլը, էլ իր կեանքը
աչքը չեկաւ. վազեց Վարթանի մօտ, որ ու շքի
բերի... Միայն բեզարած Վարթանն ուշքից
դնացել էր, նրանըմ էլ շունչ չկար..-

Խեղճ Վաղօն ասլանի պէս էրկու ոհաթ
իրան պահեց. թուրքերին մօտ չէր թողլմ...
Կտաղած թուրքերն իրանց կնի կութիւնը
(տմարդութիւնը) տեսնելով, միասին վրա
թափեցին Վաղօի վրա: Վաղօն մնի ճակատն
է փեղկ արաւ ու յետոլինքն էլ վէր ընկաւ...
Թուրքերն ընկած էրկսի վրա ու անշունչ
տղերանցը ծառի հլորած ճիւղերով կըսպեցին...
Նրանց միտքն էն էր, որ սրանց իրանց ձե-

ոռվն իրանց «սիլականներին» հանել տան
գերեզմանիցը: Թուրքերից մինը վագեց
փափախով ջուր բերեց ու շաղ տվեց նդա-
վածների երեսին յետ բերելու համար...

Անցկացաւ բաւական ժամանակ:

«Էս ուր եմ... ասեց կիսամեռ վար-
թանը... Այս գուք անօրէններ... Էլի կեն-
դանի էք...» «Էս խօսքը նա ձեռները դէս
ու դէն ժաժ տվեց տեսաւ, որ կապված ա...
Թուրքերը կանգնած, օգնըմ են, որ ուշըի
բերեն:

«Վարթան, ասեց ցած ձէնով վաղօն—
էս քու ձէնն եմ լսըմ... Ա՛խ, ուր եմ...»

«Մեր ձեռին էք, մեր, ասեց թուրքե-
րից մինը, ձեր մահը մօտեցել ա...»

—Մեր... ձեր ձեռին... հարցըեց վար-
թանը ու նրա աչքերն էլի խփվեցին...

«Հա, մեր ձեռին էք: Ո՞նց համարձակ-
վեցիք գուք մեր մեռածներին իրանց գո-
ռիցը հանել...

—Կորի, կորի, անօրէն... թէ չէ..., Ա՛խ,
ուր ա իմ թվանքը... Վարթան... Ի՞նչ ես
սուս կացել...

«Շաշ հայեր, ինչ էք երադ պատմը...
կապված էք էլի լիզուներդ չէք լում...»

—Ո՞վ... Այ գու մուռտառ... Վազո
ձեռիցս փոնի... սրանց հոգին պէտք ա հա-

նեմ... Էս խօսքը ուզեց վերկենալ, միայն
թուրքերը չթողին:

«Կապված ես, կապված, ասեց նրանցից
մինը-էլ նոր դէս ու դէն մի լնկնիլ... Թէզ
ասեցէք, պէտք ա ձեր ձեռնովն ձեր նշանած-
ներին գերեզմանիցը հանէք թէ չէ.

—Ի՞նչ. . գոռացին վարթանն ու վա-
զօն, կասես թէ նոր կենդանացան ու ուզեցին
վերկենալ... Միայն անիրաւ թուրքերն էլի
չթողին... «Շուտ, ասեցէք, հանըմ էք
թէ չէ ..»

Տղերանց երեսը քափքրտնքը մտած էր,
թուրքերից մինը սկսեց «թումբերից»
մի հողը եղեւո անել... Էն սհաթին վար-
թանը էնհէնց տեղիցը ծլունդ էլաւ, որ երեք
թուրքեր գետնի վրա փուլեցին: Նա մի զա-
մեն գուրս լուց ու չունքի ոտները կապված
էր, էլի վէր լնկաւ իր նշանածի գերեզմանի
վրա... Թուրքերից մինը վրա լնկաւ ունրա
ձեռները զայիմ փոնեց, հրամայեց գերեզման
քանդող թուրքերին որ շուտով հանեն: Վար-
թանը «Աստօծ ջան, կանչեց, ով սուրբ Սար-
դիս ինձ ուժ տուր... Մնաք բարով Շուշան...
Անուշ... Վազօ...» Էս խօսքից ետոյ թուրը
իր սրտը լցուց ա վարթանի վերջին խօս-
քերը Վազօին էլ ուշըի բերելով, նա եղ քցեց
իր վրի թուրքերին ու Վարթանի ձեռի

արիւնոտ սուրը իր փորը խրեց...

Էն սհաթին, եբոր թուրքերը պէլացած
մնացել էին կանգնած Անտակ-ձորի գլխիցը
ձէն ու ձուն լսվեց... «Վարթան, վազօ,
սիրտ առէք, գալիս ենք... ասըմ 'ին եկող-
ները. Սրանք Վարթանի ընկեր չորաններն
'ին, որ տղերանց ձէնը լսելով, օգնութիւն
'ին գալիս... Թուրքերը հէնց որ լսեցին,
թողեցին ու փախան... Զէն ածող տղերքը
եկան, համա ի՞նչ տեսան... կարդացող դու
ասա... Երկու Թուրքը արնտշաղաղ էր էլած...
Միայն որովհետև նրանք գիտէին թմբերիցն
որն ա Շուշանինը, որն ա Անուշինը, հողը
յետ-յետ արին ու սիրեկաններին իրանց
նշանածների գերեզմանների մէջ դրին:
Սրանից յետոյ տղերքն արտասունքը սրբե-
լով գնացին փախած թուրքերի ջանին».

Էս անցքից յետոյ շատ վախտ անցկա-
ցաւ: Միայն Թէ Շամշուլ... իրանց քաջե-
րին չմոռացան ու մինչի էսօր էլ «Անտակ-
ձորի» մէջ ուխտաւորներ են գնըմ: Հար-
ցնես նրանց՝ «Ուր էք գնըմ:»—Երկար
պատմութիւնից յետոյ կասեն՝ «ուխտ գպա
մեր քաջերի սուրփ Երկու Թուրքը»:



«Ազգային գրադարան



NL0330045

21665

APRIL
2-3949.

ԳԻՒՆ Է 20 ԿՈԴ.

